դքսէն, Է ձևոյ շէգդինոյ որ առ օտերաւ, իբր
նախապարիսոյ 'ի պաշտպանուի սահմանաց իւրոց
յերեսաց բրուստիացոց . զոր հի՛մ շրջակայ վիճա-
կան էա իբր աւանդ ետլսին գամի՛նայ 'ի 1321 :
Այլ յաճախ հրկիւղուիք և պօղմուիք շէտուն նմ
դուլ բարգաւաճիլ և ծաղկիլ . 'ի 1758 մեծամեծ
զնասս կրեաց համօրէն վիճակաւ իւրով 'ի մոսկո-
վոց . և 'ի 1760 ոչ կարելով ամբողջ վճարել զհարկս
պահանջելի 'ի զորաց մոսկովոց, աւար հարաւ հա-
մօրէն վիճակն . և իմ ստացուածք բնակչոցն հնի՛մ
անասնովք նոյ տարան 'ի լէհ :

Վահանգ ք. Պրուշ, կի՛ մ Ռրուսիա պրան
տէպուերկայ, կի՛ մ թիգրուի բրուստիոյ :

Այս մասն բրուստեան արուե՛ թ մասին շրջա-
պատե՛ է 'ի ջուրոց, և թ մասին յայլ և այլ նա-
հանգաց . 'ի հիւսիսոյ՝ ունի իւր սահման զսամոկի-
ցիա . յարևելոյ՝ զմեծ գքսուին լիգվանիոյ և զբոս-
լաքիս . 'ի հարաւոյ՝ զմասովիա լէհաց . իսկ յարև-
մուտոյ՝

մտոյ՝ զպալղիկ ծովն, և մասամբ ինն զպրուշ Լէ-
հաց : Տարածուի նր բովանդակ է 13664 քառակուսի
մղոն Յագրական. և ունի 62 քղքս մեծ և փոքր. և
գղեպկս և գեօզս բլմս. իսկ թիւ համօրէն բնակ-
չաց նր 600000 :

Գլխաւոր գետք նր են Վիտուլա, որ զփոքր ինչ
մասն ևեթ նր սուգանէ : Բրէիւլ. Մէիւլ, կի՛ Միւիւլ.
զորս ՚ի վեր անդր ՚ի ներածուե ստորագրեցաք : Բա-
սարիէ. ունի զծագումն առ հօքըդայն քղքաւ. և
իբրև 60 մղոնաւ չափ հոսեալ չ բրուսսիա, մերձ
բաոսարիէ գեղջ մտանէ ՚ի ծոցն վէնէտիեան, Ֆրիշ
հաֆ կոչեցել :

Վլլէ. ելանէ յերմէլանաիա քառէն. և զկնի 88 մղո-
նաչափ ընթացից, միանայ չ բրէկլլ գետոյ առ վե-
լաւ քղքաւ : Բաց ՚ի գետոց աստի՛ են յայսմ մասին
սրուշի և լիճք մեծամեծք, և ջրաբաշխ խրամք բաց-
եալք ՚ի գիւրուե վճիհանուե երկրին. որոց գլխա-
ւորքն են հետագայք :

Լիճ, կի՛ ծոց Վէնէպիեան. լը գերմ՝ Ֆրիշ կաֆ : Է-
ծոց մեծ երկայն իբր 48 մղն. և լայն 12. իսկ ուրեք
ուրեք՝ 5 ևեթ. երկայնամիտ ցամաք կիրճն անջր-
պետ չ մէջ նր՝ և պալղիկ ծովուն՝ կոչի Ֆրիշ ներսնի.
Իսկ նեղուցն՝ որով առ բիլլաւ քղքաւ կցորդի չ
նոյն ծալ՝ կոչի Կարդ. որոյ լայնուին է իբրև մղն
մի. իսկ խորուին 12 սանաչափ : Բայց խորուի լճին
կի՛ ծոցոյն սակաւ է ք ղ Բրէիւլ գետոյն. զնկ մեծ
նաւք բեռնաւորք, ոչ կարելով անցանել չ այն,
բռնադատին թափել զբեռինս ՚ի բիլլաւ քղք : Ասի
թէ այս ծոց բացաւ ՚ի 1190 ՚ի սաստիկ և յերկա-
րասե մրրկաց :

Լիճ, կի՛ ծոց Գարսնէան. լը գերմ՝ Գարսն կաֆ.
յայս անուն անուանել ՚ի գուրլանաիոյ. երկայնուի
նր՝ է 52 մղոն. իսկ լայնուին իբր 24. անջատել ՚ի
պալղիկ ծովէ երկայնամիտ ցամաք լեղունաւ հօղոյ.
զոր գերմանոցիք կոչեն Գարսն ներսնի. որ թարգ-
մանի՛ Երկիր ցածուն. ՚ի բարբառ ետոննացոց կոչի
Մէնպէնի. ք Հրոճանդան սօճեաց. իսկ առ սլի-
նիսի՛ գտանի յիշատակեալ Մէնրծոճօն անուանք.
և հողորդի չ նոյն պալղիկ ծով առ մէմէլաւ ՚ի
մեռն նեղուցի՛ որոյ լայնուին է իբրև մղոն մի, իսկ
խորուին 19 սանաչափ : Յայս ծոց ՚ի տեղիս անցիս
գտանին խաղիաղք, և յսրճանուաք. ուր և յաճախ
լինին մրրիկք վտանգաւորք : Հինգ գետք մտանեն
՚ի նմ. ք Տայնէ. Կիլիէ. Ռոստէ. Միւիէ. և Տանիէ.
Թոլ

Թող զայլ գետակս և զձորակս : 'ի շրջակայ եզերս
 նր բնակին ձկնորսք , որ առ հարկ գուրացիք կողին :
 Բաց յերկուց աստի գտանին 'ի ներքին կողմանս
 նհնգիս և այլ բլիճ լիճք մեծամեծք և փոքուիք . ոմանք
 4 , ոմանք 8 , և ոմանք մինչև 932 մղոնաչափ երկայն .
 և 4 և 8 լայն . գլխաւորքն են Սէրբիկէն . Տրաս-
 սենկէն . Լիճ Աշկերգուրի , և Լիճ Ռայնայ :

Իսկ ջրարանի խրանք են 'Նայ կիլի . որ սկսանի առ
 լարբենէն քղքաւ , և աւարտի 'ի կիլիէ գետ մերձ 'ի
 սքէբէն քղք : 'Նայ քայնէ . սկսանի առ շմերպէրկ քա-
 ղաքաւ . և քնայ աւարտի ուղղագիծ 'ի դարխաւ ,
 ուր մտանէ 'ի բրբէկըլ գետ : Գլայն Բերբէրի . իւրայն-
 քի Փոքր խրամ փիղէրիկեան . սկսանի 'ի կիլիէ գե-
 տոյն մօտ բաւդէնուսըլ քղքի . և առ բէդրիքէն
 քղքաւ 4 մղոնաւ հեռի խառնի 'ի մէմէլ գետ . զոր
 լէհք 'Նիէնէն , կի՞ 'Նէմնի կողին : Արաս Բերբէրի
 կրայն , քի Մեծ խրամ փիղէրիկեան . սկսանի 'ի վեր-
 բէ գետոյ՝ որ է առաջք մի մէմէլայ կի՞ նէմնիկայ-
 և առ լիսպաւ քղքաւ 12 մղոնաւ հեռի մտանէ 'ի
 տայնէ գետ : Այս երկու փիղէրիկեան խրանք
 սկզբնաւորեցան 'ի 1688 յայրի կոստահայն գրու-
 շէտայ . և կատարեցան 'ի 1696 . որք 'ի 1713 էն և
 այսր՝ են լէ Թրուք Թիբրին բրուսիդ :

Երկիր նր լի մասին դաշտային է , մեծք 'ի հիւսիս
 սային և յարեւմտեան կողմանս . իսկ արեւելեան և
 հարաւային կողմանք նր՝ շրջապատեւ էն անտառալից
 լէրանքք . ուր յաճախ են և լիճք մեծամեծք և ճա-
 հիճք . 'ի զեռնային կողմանց անտի մեծ մասն գետոց
 նր ունին զծագումն : Դաշտային տեղիք նր լի առա-
 ւել մասին արգաւանդ են՝ յաւէտ առ անխոնջ աշխա-
 տասիրուն բնակչացն , ք 'ի բնատուր արգասաւո-
 բուէ . որք բերեն հաճար , գայի , վարսակ , այն է՝
 իւրաք , կորեակ , ոլոռն , և այլ արմուխ . ունի և
 վուշ սրատուական , կանեփ , ծխախոտ , և աղգի աղգի
 բանջարս ստրաիդաց . այլ մերգս և պտուղս տակաւ .
 իսկ 'ի գինւոյ զուրկ է գլխովին , զոր այլուստ տա-
 նին անգ , ուր և զմիրգս . բայց արօսս ունին բիւմ
 և խոտաւէտս , և անասունս ընտիրս , մենք երի-
 վարս , և արջառս , որք կարի շահաբեր են երկրին .
 այլև զնի՞ն տեսակս վայրի երէոց , և հաւս ընտանիս
 և վայրենիս . այլ առաւել ք զմե՞ ձուկն առատ 'ի
 ծովէ 'ի լիճից և 'ի գետոց . և փայտ բլիճ 'ի սէտս
 հրոյ և շինուածոց . գտանի անդ և աղց . մի մասն
 նայի՝ որ իջանէ 'ի վր բուսոց ինչ ստրաիդաց : Այս-

սօքիկ էն գլխաւոր վաճառք՝ որք ելանեն ՚ի նէնդէ
 տտի, ոմ նշանակեցաք ՚ի ներածուէ սորին արուէ .
 որ ունելով քաջայարմար դիրս առ վճիւկանուծի,
 սակս շրջակայ ծովու, և մեծամեծ դետոց, և ջրա-
 քաշն խրամոց, որք հալորդին Է ծով, ծաղկել է
 վճիւկանուէ նր . զոր և օր ք օրէ ջանահատար լինին
 թգրք նր և ևս աճեցուցանել : Յնջագոյն զուրկ էր
 բրուստիս գրեթէ յամ արուէստից . այլ ՚ի վերջին
 թմկս քաջաջան թգրք նր ծաղկեցուցին յոյժ յոյժ,
 սէսսպէս գործարանս հիմնելով . յորս նշանաւոր էն
 գործարանք ապակւոյ, հնոցք և գործարանք եր-
 կաթոյ և սղինձոյ, ջրալսց թղթոյ և վառօդոյ, և
 այլ զնչն ասուեայ և վշեղէն Կործուածոց :

՚ի նախնի թմկս զնչն ժղճիք բնակեցան յայսմ նա-
 հանգի . յորոց սակի էն և Սուրբալի, Գալիւրդ, և
 Շլաւր, կմ Սլաւր . որոց պատմուէ մթին է և ան-
 սասոյգ մինչև ցժ գարն, յորում նախ սկան կոչի
 Պրուտ, կմ Բրուտ . և կմ ք հնչման խրեանց՝
 Բրուտէն . զորս նախնիք զնչն օրինակաւ գրեցին, ոմ
 Բրուտի . Բրուտի . Բրուտի . Պրուտի . Պրուտի . այլ ծա-
 դուան այսր անուան անսասոյգ է : Սակայն ոմանք
 հաւանական համարին, թէ նախնի բնակիւք այսր
 նահանգի՝ սակս ասհմանակից լինելոյ ուսաց՝ կո-
 չեցան Բոսորուտի . այն է՝ ժողովուրդ ասհմանակից
 աուսաց . վն զի անուեդ Բո ՚ի նախնի բարբառ
 պրուչից նշանակէ Աւքնիթեր, կմ Մերձակայ : ՚ի
 թ գարուն թգրք լէհաց փոյթ կաւան ածել ՚ի բրիս-
 տոնէական հւնս զպրուչս, որք մինչև ցայն թմկ
 կային ՚ի խաւարի կոապաշտուէ . յորոց առաջին եղև
 բոլեւրաւոս ան . որ պատուհասեաց զպրուչս, սակս
 ՚ի 997 սպանանելոյ նց զսքն ադալքերաոս, կմ ալ
 պերտոս, որ դնաց անդր քարոզել նց զքն . յետ
 այնորիկ բնմ պնդմուէք գրգռեցան Է լէհս և Է
 պրուչս : ՚ի թգ գարուն պրուչք հարին քանդեցին
 զգուրմ, զգույավիս, և զմասովիս քուս լէհաց .
 որոց գուռուատոս դուքս մասովիոյ՝ ոչ կարելով զգեմ
 ունիլ, կոչեաց յօդուէ զքաջակայ իշխանս զաղգա-
 կիցս իւր . և տուաւ յայնժամ խաչ այնոցիկ, որք
 դնային ՚ի պնդմ լէգեմ պրուչից, իրրև լէգեմ թշու-
 մեաց խաչին քնի . բայց և այնմ չեղև կարող դուռ-
 ուատոս նուանել զպրուչս . զայ ան իւր մարտակից
 զխաչակիր ասպետս թուտոնեան կարպին, որք վան-
 նալ զպրուչս ՚ի 1230 ընկալան զմրուէ դուրմ և ոսպ-
 րին քուսց վն 20 ամաց ևեթ . ապա մշտնջեհասաւ
 հաս

հաստատեցան 'ի նո՞ . Եւ նմին տոճաւ նոց բացարձակ
 տրուէ 'ի վր յամ տեղեաց , որոս սրով իւրեանց աւ
 յապայն սասային 'ի պրուշից : Արդ՝ ոք նիզակակ
 ցուք ասպետաց՝ որք կոչէին Ասպետք Թրոյ , զկնի
 53 ամաց զբովանդակ բրուսսիա Եւ տրուէ իւրեանց
 նսճաճեցին . և 'ի 1309 կարգապետք նոց 'ի մէրեէն
 պուրկ հաստատեցին զաթոռ իւրեանց : Այսպիսի
 քաջագործութք մեծամեծաւ ասպետացն , ելին 'ի
 մարտ և Եդէմ լիզվանիացւոց , այլ 'ի պարսուէ մատ
 նեցան առաջի նոց . ապա 'ի 1410 հարան 'ի հարուճածս
 անհնարինս 'ի լէհաց առ դաննէնպերկ և կրէնվալտ
 քղքք . և կորուսին զմեծ մասն իշխանուէ իւր
 եանց : Եւ 'ի 1454 կէսն պրուշի տաղակացեալ 'ի
 գժնդակ լծոյ նոց , ինքնակամ անձնատուր եղև ք
 հասիմիրայ լէհաց արքայի . ապա զկնի բազմապա
 տիկ պիտոյնց 'ի 1466 հաստատեցաւ , զի մասն այն
 պրուշի՝ որ այժմ կոչի պրուշիա , կի՞ բրուսսիա լէ
 հաց , լիցի մի յազատ իշխանուէց Թիրուէն լէհաց , և
 Եւ պաշտպանութ Թիրի նո՞ : Իսկ միւս մասն լիցի Եւ
 տրուէ Թեառնեան կարգին , բայց ոչ բացարձակապէս ,
 այլ իբրև աւանդ առել 'ի լէհաստանու . և Թէպէտ
 յետ այնորիկ գուն գործեցին ասպետք Թեառնեանք
 'ի բաց հանել զանձինս 'ի տրուէն լէհաց , այլ ոչ
 կարացին . վնյ 'ի 1519 անդրէն գրգռեցան պիտոնէք .
 և 'ի 1525 եղև խաղաղութ 'ի գրադովիա . ուր ալբեր
 տոս փիդէրիկոս կարգապետ Թեառնեան կարգին
 Թողել զկարգ կրճաւորութ , փոխեցաւ 'ի դուքս
 Յական ստորին պրուշի , կի՞ բրուսսիոյ Եւ պայմա
 նաւ՝ զի ունիցի զայն իբրև յաւանդ 'ի լէհաստանու :
 և արու զաւակք նո՞ իրաւամբ ժառանգուէ յաջոր
 գեսցեն զտրուէ նո՞ . և 'ի պակասիչ նոց՝ եզբարք նո
 ղին ալբերտոսի , և որդիք նոց :

Աս զայս օրինակ 'ի վերջ հասել աւարտեցաւ տրուէ
 ասպետաց Թեառնեան կարգին 'ի պրուշ . որ եկաց
 մնաց Եւ ամս իբրև 300 : Սոյն այս նոր գուքս հա
 ւատագրութ եմոյժ 'ի տրուէ իւր զաղանդն լուտե
 բական . և 'ի 1544 հիմնեաց համալսարան 'ի քէնի
 կապերկ : Այս յովակիմ փիդէրիկոս կայսրընտիր
 միացոյց զայս մասն պրուշի Եւ կայսրընտիր տանն
 պրահնէպուրկայ : Յետոյ փիդէրիկոս դուրիկըմաս
 հզօր կայսրընտիրն յերեսնամեան պիտոյն անդ Թէ
 պէա 'ի սկզբանն՝ շվէտաց նպաստեր , այլ յետոյ դար
 ձաւ 'ի կողմն լէհաց . յայն սակս 'ի 1657 'ի դաշնա
 գրուէն վէլաւայ և պրոմպերկայ՝ յովհաննէս կասիմիր

արքայ լէհայ՝ աղաա արոր զնա յամէ . որ և հանդերձ համօրէն արու յաջորդօք իւրովք ծանուցաւ ինքնիշխան տր այնր մասին պրուչի , որում մինչև ցայնժամ իշխէր հանդերձ կախմամբ իմն զարքայէն լէհաց : Եւ այնուհետև այս մասն պրուչի միշտ եկաց մնաց Է տրուք կայսրընտրաց պրանտէպուրիայ : Սոյն սա լարձակեաց զտրուի պրանտէպուրիայ , որ և յայն սակս մեծ կոչեցաւ : Իսկ փոքերիկոս որդի և յաջորդ նր՝ զգրուին պրուչեան ամբարձ ՚ի պատիւ թգրուէ . ուն նշանակեցաք ՚ի վեր անդր ՚ի ներածուէ տրուէն բրուսսիոյ : ՚ի 1757 յոգնախումբ զօրք մոսկովաց ՚ի լիզզանիոյ մաին ՚ի փոքր պրուչ , կմ բրուսսիա . և անհնարին աւերածս դորձեցին ՚ի նմ . զոր և կալան իբրև Է ամս 5 . այլ ՚ի 1762 անդրէն գարձուցին արքային պրուչի : Ապա ՚ի 1773 ՚ի բաժանել զլէհերից ինքնակալաց , արքայն պրուչի բաց յայլոց տեղեաց , զոր էառ ՚ի մեծէն լէհաստանու : Է ի բե դրուեաց և զբրուսսիայն լէհաց բովանդակ : Յայս նշնգ ևն երկու գլխաւոր կրօնք կմ աղանդք լուտերականն և կալվինական . յառաջագոյն գրեթէ բոլոր նշնգն լուտերական էր . վն զի վերոգրեալ արքերդոս առաջին դուքս նր զայն աղանդ եմոյժ . բաց յետոյ իբրև եկին աստի և անտի նոր գաղթականք , որք լ առաւել մասին կալվինական էին , բազմացան անդ և կալվինականք - զի տոճաւ նց ազատուի հրատարակաւ կատարելոյ զպաշտամունս իւրեանց . որք ստացան և եկեղեցիս ոչ միայն ՚ի գեօղս , այլև ՚ի Քղքս , և յամ տեղիս , ուր և կամեցան : Լն անդ և ուղղափառք , այլ սակաւ . որք յայսմ մասին պրուչի զերլօ և եթ գլխաւոր եկեղեցիս ունին . և այլ և սքանի մի փոքրիկ եկեղեցիս ՚ի գեօղս : Գտոււնին և սոկինեանք կմ արիոսեանք , որք ՚ի նախանց եալ դարու տարազրելք ՚ի լէհաց , եկին բնակեցան յայսմ մասին պրուչի . և թէպէտ ՚ի սկզբան անցել դարու աստի ևս արտրեցան , սակայն մնացին ՚ի ծածուկ քանի մի գերդաստանք . որք ՚ի վերջին ժակս առ սակաւ սակաւ յերևան եկել , ստացան եկեղեցիս ՚ի գեօղս ինչ :

Այս նշնգ բաժանի ՚ի չորս էււս . որք են Սաճան , Կարանկիա . Օպէլանա . և փոքր լիւվանիա . զորս յառաջէլայդ ստորագրեացուք :

ՄԱՏԼԱՆՔԻՄ Է

Մ յս ԳԼԱ պարագրէ զճախնի Մատանքիս . ըզ-
մասն ինչ հնոյ (Նաբր-Նոյ) և Պերրլանքի . եր-
կիր նր լը առաւել մասին աւազուց է և անբեր .
և լը մասին անտառալից . և յանտառաննր գամնին
բազմուի եղջերուաց , այծեմանց , նապաստակաց ,
և աղգի աղգի վայրենի թուչնոց . իսկ 'ի կողմն լիգ-
վանիոյ' է դիւր գաշտավայր անդործ և անգարման
իրբ 24 մղոն լը երկայն և 16 լը լայն , ուր յնշապոյն
էին ցուլք վայրենիք . առատուի է աստ ձկան , 'ի
լճից , 'ի գետոց , և 'ի ծովէ : Գլխաւոր սեղիք նր
են հետագայք :

Վեկիպերի . 'ի հն' Ռեճիօճնդամ . 'ի բարբառ լէհաց
Գրուէլից . իսկ լը լիգվանիացուց' Դարալապոյնէ : Է
գլխաւոր քղք համօրեն պրանտէպուրկեան պրու-
չի . մեծաշէն' բազմազաւառ . և մի յերևելի վաճառա-
տեղեացն եւրոպիոյ , առ բրէկըլ գետով . յորոյ վր
են աստ 7 կամուրջք : Այս քղք բովանդակի յե-
րից քղքց միտցեւոց . որք կողմն Ալտրապր . այս է'
Հին քղք . սա մինչև ց 1455 կոչէր Քեկիպերի . ապա
կոչեցաւ հին քղք առ 'ի զնձնուի 'ի Լեդեկիտք քա-
ղաքէ անտի , որ է երկդ քղք . իսկ երրորդն կոչե-
քնայեհօգ . բովանդակի և 'ի 14 արուճարձանեայց ,
որոց շրջադատն հրթձ Քրիպերիպուրի ամրոցաւ (զոր
ստորև ունինք ստորագրել) առաւել է ք 8 մղոնա-
չափս . պատեւ հողալից պարսպապատ պատնշաւ :
Բայ յեկեղեցեաց' և յայլոց հմրկց շինուածոց' ու-
նի տունս իրբև 3000 . և բնակիչս (թող զօտարա-
կանս , և զղինճօրս , որք կան 'ի պահպանուի քա-
ղաքին և բերդի նր ,) առաւել ք 40000 . որք լը
առաւել մասին են գերմանացիք լուտերականք . են
անդ և բազմուի գերմանացոց , անգղիացուց , հո-
լանաացոց , և գաղղիացուց կալվինականաց . այլև
հրէայք բքմք . գրոանին և ուղղափառք , այլ սու-
կաք . և սք ամբն ունին սեփական եկեղեցիս :
Գլխաւոր լեզու քղքիս է լեզուն գերմանացուց .
բայց առ 'ի դիւրացուցանել զառևտրուի վաճառա-
կամուժե , խօսին և 'ի բարբառ լէհաց , և լիգվա-
նիացուց : Փողոցք նր 'ի գիշերի լուսաւորին 1253
մեծամեծ լապտերքք . վր յ մարթ է շրջիլ 'ի նս 'ի
գիշերի , ուղ 'ի տունջեան : Ունի և մեծամեծ ան-

կելանոցս, և ասորանս հոյակապս, և այլ զննչն հարկ շինուածս մեծաշէնս. այլև համաշխարհն երկելի, որ յանուն քղքին և հիմնադրի նր կոչի Համաշխարհն բեկիսնսնստն ալբերտան. այլև Բելիւնէան 'ի բրեկըլ գետոյն. հիմնել 'ի 1544 յաբերտոտե իշխանէ. յորում են 38 ուսուցիչք. Թող զսասրին դասասուս. ամբն լուսերականք. ունի և այլ երեւելի դպրոցս, և ձեմարանս դիտութեց. և ազատական արուեստից, և պարտեզս գեղեցիկս և մեծամեծս ոչ միայն յարուարածանս, այլև 'ի բուն քղքի անդ : Յնչագոյն ունէր և եմպարան, որոյ ամոռանիտ եկեղեցի կայ մնայ մինչև ցայսօր. այլ 'ի ձեռս լուսերականայ. ուր 'ի 1721 շինեցին երգեհոն մեծ և ճարտարագործ. որ ունի 5000 փողս : Աւնի և գործարանս զննչն արուեստակերտ իրաց և նւէնդիտ ուստուական. ուր յաճախեն երթեկեկք նաւուց : Այս քղք ունի իւր սեփական զօրս. վնչ ազատ է 'ի ասլոյ իջևանս արքունի զօրաց : 'ի 1701 փիղեբիկոս ան Թքր պրուշի 'ի սին քղքի եդ Թագ արքայական անձին իւրում, և կոչեցաւ Թքր պրուշի : Սկիզբն հիմնարկութե նր եղև 'ի 1255. յորժամ ան պալմիսլաուոս արքայ սոհեմիոյ գնաց յօգնուի ասպետաց Թուսոնեան կարգին Շգեմ սամլանտիացուց հեթանոսաց՝ որք լը իորհրոյ նսրին արքայի՝ շէնեցին գղեակ, և ապա քղք առ նովաւ. զոր և 'ի պատիւ նր կոչեցին Քեհիպերի, այս է Լեառն արքայի : 'ի 1267 փոխադրեցաւ յայլ տեղի. և 'ի 1286. ստացաւ զազատութս գուլմ քղքի :

Քրեկեհիպերի : Եւ ամրոց հզօր, շինել 'ի 1657. հանգեոյ Քեպիպեք քղքի. ուր երկու առաջք բրեկըլ գետոյն լիսանին : Եւ է քառակուսի կանոնաւոր. պատել լայնաբաց խրամով, և բրեկըլ գետով, Ե որում միանայ Գոթեկեդայի կոչեցել լինն : Յամրոցի անդ գոյ և եկեղեցի և զինարան մեծ :

Ֆիլիպսուին : Քղք փոքր. որ 'ի 1289 Թուսկանէն մինչև ցճարակիլ լուսերական ազանդոյն՝ երամոս եմպին սամլանտիոյ. ունի գղեակ ամուր շրջապատ եալ պարսպօք և խրամօք :

Բիւս : Քղք բարեշէն, և բերդ ամուր, կառուցեալ 'ի լեզու ինն հողոյ կմ ցամաքի իբրև նախապարիսպ, և դուռն լորուսիոյ 'ի ծովակողմն կուսեփողոցք նր լայն են և ուղիղ. և շինուածք տանց վայելուչ շարքարեղ 'ի ներքուստ լը սովորուե հռչանտացուց. ունի նւէնդիտ ուստուական, ուր

յաճախեն նաք. որք աստ թափեն զբեռինս թմա
սին. շատք ևս ասակն զսեղի առնուն, վն շունկոյ
վենկեակեան ծոցոյն խորութի բաւական բեռնաւոր
նաւուց մինչև 'ի բենիկապերկ քղք. Աջոց քղքիս'
է հնգանկիւնի. արտաքին ամուրիք յի հզորք. և
ամ շինուածք պատկանելք առ նա՝ դեղեցիկ ք և բա
րեկարգք: 'ի դուան ամբոցին կառուցել կոյ վիմա,
տաշ հեծել արձան մեծին փղեկերիկոսի վիշկլմոսի.
և 'ի վի ք գրանն աշտարակ պահպանութե. և առ
գրան 'ի կողմն արտաքին պարսպոց' և արձանն շածոյն
պտղի ունելով զբերսս առ շէտս. իսկ 'ի ներքս
յափոց անգր եկեղեցի, ուր լուտերականք և կաշ-
վենականք կտրեն զպաշտամունս ի բրանց, և համ
բարք հրազնուց: 'ի 1626 առին շէտք զայս ամ
բոց, զոր և ևս ամբոցուցին. այլ 'ի 1635 թոցին և
մեկնեցան անտի. իսկ 'ի 1758 մասկալք տիրեցին
նմա:

Լորիս: Քղք փոքր' և բերք ամուր' առ տայնե դե
սով. որ յերկուց կողմանց պատել է 'ի գետոց, իսկ
յայլ կողմանց ամրակառոյց պարսպք և խրամք:
Աստ վճարեն զմարսս նաւակք, որք չէ մեծ փե
ղերիկեան ջրալից խրամս եկել, անցանեն աստի 'ի
բենիկապերկ:

Գաբիս: Քղք փոքր և անլեն, առ որով տայնե
վտակ խառնի 'ի բրեկըլ. ունի գլեակ մեծ և վաղն
ջահան պատել խրամք: Աստ 'ի 1568 մեաւ ալ-
բերտաւ դուքս, որ եմյժ 'ի պրուշ զազանգ լու-
տերական:

Վէլու: Քղք փոքր շինել 'ի 1336 'ի կղզի ինչ ուր
Լէլէ վտակ մտան 'ի բրեկըլ. 'ի 1736 հրկեղ կղև.
և թէպա յետոյ անգրեն շինեցաւ, թ շինուածոց
լու ք զսաւըինն, այլ չէ այնպէս ծագելէ. ոնկեր
յնչն. ունի տունս 264: Անուանի է այս տեղի 'ի
պատմութիս ասկա դաշնագրուեց' որք եղեն աստ 'ի
1657 թ լէնս. որով փղեկերիկոսի վիշկլմոսի կոչար.
ընարին տունս ինքնիշխան արուի 'ի վի դքսունն
պրուշ. որ յետոյ հաստատեցաւ և 'ի պիտկոսք կի՞
պրուշերկ քղքի որ 'ի լէնս:

Վարանկիա :

Վյս քաղաքը պարագրէ զնախնի Վարանկիա . զմեծ մասն Բարանկայ . և զմասն ինչ կալինդիայ : Բնակիչք նր լը մեծի մասին լուսերական են . իսկ այլք ուղղափառք և կալվինականք : Երկիր նր առ հմրկ առեւլ, անբեր է . քղի զերեւելի մասն նր դրաւեն անտառք, և դաշտավայրք անգործ . բայց օւնի և անգաստանս ճշակելս, և ընսանի անասունս . և առաւել ք զամ ձուկն անատ 'ի գետոյ և 'ի լճից :

Գլխաւոր տեղիք նր են հետագայք :

Պրանդեպուրի : Է քղք փոքր և անշուք առ վենէտ՝ ծոցով, ուր հանդառ գետն մտանէ 'ի ծոց անդր . բնակիչք նր լը առաւել մասին ձկնորս են : Բայց ունի բերդ մեծ և Շարձակ, շինեւլ 'ի 1266 յոտառնէ մարդդանէն սրանտէպուրկայ, և յիտոյ անդրէն նորոգեւլ զկնի աւերելոյ զնա պրուշից 'ի 1520 : Հայկիէնպայ . որ կոչի և Սէրադ . 'ի բարբառ լէհաց Սէրա Սէրիգ : Է քղք փոքր առ Էրֆրէ, կի՞ վարֆր դեաով . շինեւլ 'ի 1301 . ուր նախնի կոապարիշտ պրուշք 'ի ներքոյ մեծի կաղամախ ծառոյ պաշտէին զԲուրխս անուն կուռս . և յայն սակա թոճի թէ զքղքս զայս 'ի բարբառ իւրեանց կոչուցին Հայկիէնպար . այս է Սէր քղք . ապա երևի թէ 'ի Բակս քրիստոնէութե կոչեցաւ Հայկիէնպայ . որ թարգմանի Սի տապար . թերևս զի տապարա 'ի բաց հատին զծառն զայն . և յայնմանէ տապարն եզև նշան քղքին . զոր ձևացուցանեն երկուսպարս խալաձև դնելով 'ի վր միմեանց :

Պարանկիայ : Գլք բարեւէն գրեթէ ք զայլ ամ քղքս նադանկիոյ առ ալլէ գետով 'ի գեղազոճարձ վայրի, շինեւլ 'ի 1331 : Ունի և գլեռակ, կի՞ բերդ պատուական կառուցեւլ իբր 'ի ժի գարու յասու, տագ թեաանեան կարգին :

Բարանկապուրի : Քղք փոքր, այլ գեղեցիկ և պարտապատ, որ ունի և բերդ, շինեւլ 'ի 1329 . բնիկ բնակիչք նր են իբր 200 ևեթ, ամբն լուսերական . և ունին 3 եկեղեցիս, յորս երևելի է մեծաշէն եկեղեցին գերմանացոց, և անկելանոցս : Այս քղք 'ի նախնուան եզև առ Բակ մի աթոռ կարգապետաց թեաանեան կարգին, ուր նստան թ կարգապետք : **Ալանկիայ :** Քղք փոքր, այլ բարեւէն պատեւլ ցցալ կերտ :

կերտ պատնշօք, ունի բերդ ամուր շինել 'ի 1335 օ
 առ Մարգէէ լծիւ կի՛ ծովակաւ . որոյ երկայնուին
 է 28 մղոն . իսկ լայնուին 6 . և բերէ օձամուկն բքմ
 յոյժ . որ և է մի 'ի գլխաւոր վախաւաց սորին քղբի .
 Կերտաւն : Բղք փոքր հիմնել 'ի 1325 առ օմէդ
 գետով . որ ունի երկու դղեակա . յորոց մինն որ է
 և դեզեցիկ . որ և ունի պարտեղ վայելուչ : Մերձ
 առ այս քղբ է լիճ մեծ կի՛ ծովակ , յորում գոյ
 կղզի շարժական , որ է հարուստ մի սարածու թի
 խոտալից հողոյ յերեսս ջուրց . որ երբեմն յայս կողմն
 և երբեմն յայն կողմն վարի 'ի հողմոց : Այս կղզի
 յնջին Ժփս լարձակագոյն էր . զի երկայնուի նր
 առաւել էր ք զ350 քայլս . իսկ լայնուին 250 . յո
 բում արածէին մինչ ց 100 անասունք . այլ և ծառք
 և թուփք անկեալ կային 'ի նի՛ . իսկ այժմ հասել
 է 'ի մասունս ինչ . և օր լը օրէ միշտ նոճազի : Բնա
 կիք քղբին 'ի շարժմանց այսր կղզոյ՝ գուշակէն
 զփոփոխուիս օգոց . որ և յայն սակս կոչի Աւ
 մանարքօ . իբր շրջան կի՛ օրացոյց կերտաւէնայ :
 Պարտէն : Բերդաքղբ բարեշէն առ լեպէ գետով .
 շինեալ 'ի կէսն ժի՛ գարուն . ուշ նստան երբեմն
 եղսունք բովեռանիոյ . և ստպեոք թևսոնեանք :
 Եօրտէնպարի . Տրեկի՛ Գարն . Ըիբի՛նպալ . Սենպարի :
 Են փոքրիկ քղբք 'ի սին Գուրի :

() պերլանա :

Թարգմանի Երկիր բարձր . Եճացոյցս սովորա
 բար գրի Հօգէլանփա . որ զնոյն նշանակէ .
 և պարագրէ զնախնի Բօլիսանա . Բօլիսանիա . և ըզ
 Կաշիփա : Բնակիչք նր լը առաւել մասին լուտե
 րական են և կալվինական . բայց գտունին անգ և
 ուղղափառք բզմք , սրք ունին 5 եկեղեցիս 'ի սմին
 Գուրի : Երկիր նր լը ամ տեղիս մշակել է և արգա
 ւանգ . ունի և անսառս բզմն : իսկ գլխաւոր տե
 ղիք նր են հետագայք :
 Մարիէնվերբէր . ք Վղզի մարեմայ . 'ի բարբառ լեհաց
 Գւլփոյն : Է՛ քղբ բարեշէն . որոյ առաջին հիմնար
 կուին եզև 'ի 1233 . 'ի կղզի ինչ կոչեցել Փլփոյն .
 յորմէ զինի սակաւուց փոխադրեցաւ 'ի տեղին .
 աւր այժմդ է առ լեպէ գետով , մերձ 'ի սահմանս
 փոքուն բովեռանիոյ . ուր 'ի նախնու մն նստելին
 եղսունք բովեռանիոյ . և ոմանք 'ի կարգապետաց
 թև .

Թևոսնեսոն կարգին : Մայր եկեղեցի նր մեծ է ք
զայլ ամ եկեղեցիս պրուշե , և ամրակուռ բերգա
նման : Ունի և դղեակ մեծ և ըարձակ , լս սուլորուե
նախնեսաց շինեչ և ամրացուցեալ :

Հուլանք : Քչք բարեչէն և երևելի կառուցեչ 'ի
վր բլրոյ առ վէսդէ դետով . և պարսպեչ ամրա
կուռ պարսպօք և աշտարակօք . փողոցքնր երկայն
են և լայն , և տունք նր գեղեցիկք . ունի և դղեակ
'ի բարձրացեչ վայրի , և երկու արուճարձանս , և
պարսէզս գեղեցիկս : Չայս քղք ասեն շինեալ 'ի
1296 ամանց իջևանաց հոլանտացւոց . որք զինի սպա
նուե կամսին և փլորենախնոսի , խոյս ետուն 'ի կող
մանս յայտոսիկ :

Ախլէնպարի : Քչք հին և բարեչէն առ կիլիզ գետով
միանգամայն և առ լճիւ . ունի դղեակ մեծ և ըար
ձակ , այլ քայքայեչ 'ի պէսնիս պնզմաց . որում 'ի
1578 զվերջին աւերած ետուն շէտք . որ մինչև ցայ
սօր չև ևս շինեցաւ :

Օդէլպարի : Քչք փոքր , այլ բարեչէն և բաղմա
մարգ . առ Վէլպարս գետով . որ ունի և դղեակ
վազնջական .

Րիւննարի : Քաղաք հին , ուր նասան եպստմնքբօ
մեռանիոյ մինչև ցամն 1587 . շնորձածք նր լս մեծի
մասին բարձր են , և փողոցքն նեղ , վրջ և մթին .
նոյնիս և դղեակ նր կառուցեչ 'ի վր լէրին' (որ
հնադոյն ևս է ք զքղքն ,) աւերեչ է յոյժ :

Մոհրանիէն : Պարսպաքղք փոքր , այլ բարեչէն շոր
ջապատեչ կրկին խրամօք , և 2 մեծամեծ լճիւք .
որոյ հիմնարկուին ասի լեալ 'ի 1302 . և աւարտեչ
'ի 1328 . 'ի քաջայարմար տեղուջ 'ի վր արբունի
ճննդհին , որ հանէ 'ի լէհ :

Բասէնկայ . Վիւննպեի . Նայրենպարի . Սուրա .
Օդէլպարի . Հոնենպարի . Պիւլֆալէրե . Բասէնպեի .
Քիւսպարի , կմ և Նւր քիւսպարի : Են փոքրիկ քա
ղաքք յայսմ գաւառի :

Փոքր Լիդանիա :

Լ յս գաւառ ձգի առ սամլանտիա . և պարագրե
զհին Սւալիա . զմեծ մասն Կապրուկոյ . և զփոքր
մասն ինչ Սաֆաւիոյ : Երկայնուի նր է 72 մղոն . իսկ
լայնուին 48 և 32 . որ 'ի 1710 գրեթէ խալառ ա
մայացաւ 'ի բնակչաց 'ի սլանուս դժնդակ ժանաախ
սի :

տի : Այս 'ի 1720 փրկերիկոս վիլելմս արքայն ժողովեաց անդ ժողդ բիւժ 'ի զվիցերաց 'ի զալլիաց-
 ւոց և 'ի գերմանացաց . և 'ի 1732 ետ անդ տեղն
 բնակուեւ և 15500 սալիսպուրկեցւոց , որք զամայն
 զանբեր և զխոսանացեալ զայս երկիր՝ ժրջան
 մշակուի այնպս արգաւանդս և արդիւնաբերս գոր-
 ծեցին , մինչև դերազանցել զայլովք գաւառօքն
 բրուսսիոյ , կի՞ պրուչի . 'ի բաց հատին զփուշս , և
 զմս ց սու անպիտանս , յսանքեցուցին զճահիճս , շի-
 նեցին քաղաքս , և գեղս , և եկեղեցիս , և լցին
 զերկիրն բնակչօք . և բիւրաւոր ծախք թիւրին , ա-
 լարեւի՛ իշինուի երկրին , 'ի սուղ Ֆիկի բիւժ առա-
 ւելուի վճարեցան . սուտի այժմ է մի յառաել ար-
 դաւանդ և 'ի բազմամարդ քաւցն պրուչի : Բնա-
 կիւք նր կէս մի լուտերական եւ , և կէս մի կալի-
 նական . և ստիաւ ոմանք ուղղափառք . որոց գոլով
 հաւաքեւի՛ ի զնիւն աղգաց , խօսին 'ի զնիւն լեզուս .
 բայց ըհանրական լեզու քաւին է լեզուն գերմա-
 նացւոց : Իսկ գլխաւոր տեղիք նր են հետագայք :
 Մեկէ , կի՞ Մեկն . 'ի բարբառ կորիտայոց , կի՞ Լեդ-
 փոնայոց , Գլայփափ : Էք քաղաք բազմավաճառ , և ալ
 րոց և նահնգիստ առ կուրանեան ծոցով , ուր մտա-
 նէ Տոնի գետն . շինեցաւ 'ի 1279 . և ամրացուցաւ
 'ի 1312 . և 'ի կարգապետէն լիվոնիոյ սուճաւ կար-
 գապետին թմտոնեան կարգին պրուչի : Այս քա-
 վաք թեւիս փոքր է , զի ունի տունս իբրև 400 և եթ ,
 այլ բազմամարդ և բազմավաճառ . նահնգիստ նր
 մեծ է և սալահով 'ի հողմոց . պաշտպանեւ ռմբաւ
 գործեօք ամրոցին որ առ նովաւ . և ունեւով յեր-
 կուց կողմանց ամրակուռ աճբարտակս , որք 50 ձո-
 զաչափ ձգին 'ի ներքս 'ի ծոց անդր . յորոյ 'ի շինու-
 թի ծախեցաւ 5000 վեհեո՛ սակի : Յայս նահնգիստ
 'ի 1752 մտին 70 նաւք . և ելին 69 բերելով և տա-
 նելով անախ զանազան վաճառս . գլխաւոր վաճառք
 սորին քղքի՛ են արմտիք , օճառ , վուշ , կանեփ
 սերմն կտաւատի ևն :

Գիւտի . որ և Քրիստոսի : Քաղաք բարեշէն , մենդ
 թէ մեծ , բազմամարդ և բազմարուճեստ քան զայլ
 քաղաքս պրուչի զինի քէնիկսսպերկայաւ մեմէլ գե-
 տով . ը որ առնէ բիւժ առւարուիս ը քէնիկսպերկ ,
 և ը լէհ . և գլխաւոր վաճառք նր են արմտիք ,
 սերմն կտաւատի , ալ , փայտ , մամ , կողի , ևն :
 Բալիտ : Բիւք փոքր առ մեմէլ գետով . ունի գլեակ
 հին , որ է մի 'ի վաղնջական գլեկաց անախ պրուչի .

որ և երևելի էր 'ի Ժմիս կուսարչոտուէ պրուշից ,
զոր 'ի 1255 նորագեաց՝ մենդ թէ վերստին շինեաց
կարգն թեւոնեան . և ապա հրձիգ լեալ 'ի հեթա
նոսաց անախ , 'ի 1357 անգրէն նորագեացաւ , և կա
շեցաւ Լուսոհոսի , և ապա Բալիդ , յանուն գետոյն
որ առ նոյնաւ անցանէ :

Ինտերգուրի : Քաղաք փոքր առ Ալիւերս գետով ,
հիմնել 'ի 1572 . ունի առնս իրրև 350 և եթ . և բը
նակիչս իրրև 3000 . և գլեակ պատուական :

Կասովինէն : Քաղաք նորաշէն , շինել 'ի 1725 'ի գե
ղազունարձ վայրի առ բլսսէ գետով , որ ունի առնս
իրրև 200 և եթ . և բնակիչս իրրև 3000 .

Տուրքիէն : Քաղաք փոքր առ անկերաբ գետով , զոր
'ի 1732 չարձակեցին սալիսպուրկացիք :

Օւնոթո : Դղեակ՝ զոր հնդ Մալիսպուր քաղաքաւ
ետ շինել ալրերառս իշիանն 'ի յիշատակ խորհրդակ
ցուեն , զոր արար մերձ յայս անդի չ սիկիսմուն
գոսի օգտատոթ լէհաց արքայի . ուղ և նա 32 մղ
նաւ հեռի առ սահմանօք լէհաց 'ի 1560 շինեաց բո
ղաք , և եգ նմ անուն Օփուրոն : Այնչ կարի հետ
աստի 'ի 1656 հարան 'ի հարուածս սաստիկս թա
թարք 'ի շվետաց և 'ի կայսրնաիր զորաց . և բաձի
վիլ իշիանն՝ որ էր կալանաւորել , ազատեցաւ :

Լիս : Քաղաք փոքր , սղ բարեշէն առ լճիւ . և
գլխաւոր տեղի շրջակայ վիճակի . ունի գարոց եր
և ելի հիմնեալ 'ի 1588 . և գլեակ 'ի վր կղուոյ որ
'ի լճի անդ :

Եօնանեպուրի : Քաղաք փոքր և բարետեսիլ 'ի առ
փարակ վայրի առ Փիւ գետով . որ աստէն ելանէ
'ի Շէիբիսիէն լճն . ունի ամրոց , զոր Ժմիաւ ամ
բացուցին :

Լեյն : Բերդաքաղաք հիմնել 'ի 1285 'ի ջրարբի տեղ
ւոջ , առ ջրարախ իրամով որ զլէլանս կոչեցել
լիճն միացուցանէ չ Մուրշէն լճին , 'ի շրջակայս
սորին քաղաքի գասն գրամք հին հասվմոյցեաց :

Ռայն : Քաղաք փոքր և բարեշէն . ունելով ամրոց
նշոր առ Ռայնէն լճիւ , շինել 'ի վերջն ժգ գարու :

Նահանգ իք . Պրուշ կի՛ք Տրուստիա
Էհհաց . կի՛ք Ղաքուռի բրուստիոյ :

Եւս մասն բրուստիոյ ձգի առ պալտիկ ծովու .
Ասր վէսդուշա գեան մտանէ՛ի ծով անգր : Տա-
րածուռի նր է իբրև 1936 մկոն երկրաչափական . և
ունի անդաստանս պարարտս և արգասաւորս , և
դաշտս խոտաւէտս և արգաւանդս . բայց ուրեք
ուրեք , մենդ ՚ի փոքրն բովեռանիա գտանին Ճար-
ձակ վայրք լը մասին բնութիւն անբերք , և լը մասին
առ անհոգուե բնակչաց , զի Լքեալ կան անգործ .
որպիսի է Ճարձակ անապատն Ղաւէլայ , որոյ եր-
կայնութին է իբրև 36 մկոն : Բնակիչք նր կէս մի
լէհք են , և կէս մի գերմանացի , կի՛ք պրուշք . որք
լը մեծի մասին ուղղափառ են . իսկ այլք լը մասին
լուտերական , և լը մասին կալվինական : ՚ի ժիշ
դարուն և փոքր մի զկնի՛ աղանդն լուտերի մեծա-
պէս ճարակեցաւ յայլմ նահանգի . այլ յետոյ անգ-
րէն զօրացաւ ուղղափառուին , ուստի այժմ ՚ի սա-
կաւ քղքս ունին լուտերականք սեփական եկեղե-
ցիս . վն զի զմեծ մասն եկեղեցեաց առին ուղղա-
փառք ՚ի ձեռաց նյ : Այս մասն պրուշի բաժանի
՚ի չորս իւրս , որք են՝ փոքր Բովեռանիա . կի՛ք Բովե-
րեալ . որ է նոճաղականն Բովեռանիա անոճան . Ղաւ-
ժիկերթ . կի՛ք Ղաւէլա . Ղախարարուի Գալիպոսիայ , և
Երեւանիա , կի՛ք Բովեռանի վարիոյ , զորս յառաջիկայդ
ստորագրեցուք :

Փոքր Բովեռանիա . կի՛ք Բովերեւա :

Ար յնշագոյն մասն բովեռանիոյ , և ունէր իւր
ք սեփական իշխանս ՚ի տանէն բովեռանիոյ . յորոց
վերջինն ՚ի մեռանիւ անժառանգ ՚ի 1295 . պրիմիաւա-
լոս ք իշխանն մեծին Էհհաստանու կացուցաւ ժա-
ռանգ այսր իւրի . բայց մարքէզք պրանտեպուր-
կոյ , շեռուն նմ թոյլ մտանէլ ՚ի ժառանգուի երկ-
րին , այլ ինքեանք տիրեցին նմ մինչև ցամն 1311 .
յորում խաչակիր ասպետք գնոյ առին ՚ի նյէ զեր-
կիրն , որ և եկաց մնաց ՚ի ձեռս նյ մինչև ց 1466 .
այսպ

տպա անկաւ ընտրուի լէհայ . և 'ի 1773 տունաւ արքային պրուշից . բայց 'ի տանցքա թղթէ , և չքնակայ վիճակէ նր արլ յետոյ և այն էանց ընտրուած թմադաւորին բրուսից : Գլխաւոր տեղիք նորա են հետագայք :

Տանգրա . կի՛ Տանդիտ . լո՛ Տանդիտուս . այլև կէրա նաւ , լո լէհ՛՛ կփայտ : Է բեգաթղթ մեծանիսա , ամուր , բաղնամարդ , փարթամ , և բաղնովաճառառ վիսգուլա դետով , 4 մղոնաւ հետի 'ի պալլիկ ծովէն , բաժանել էրկու գետակօք յերկու մասունս կի՛ թղթս . որք լո գերմ՛՛ կոչին Կոյքադ . և Ալլադադ , այս է՛՛ Կոր թղթ . և Հին քաղաք . ունի և արունարձանս : Փողոցք նր գրեթէ առ հնրկ նեղ են . վն զի յերկուց կողմանց հանգէպ տանց շինեալ կան սալայատակք , ցր խալաբըրմ , քանի մի աստիճանօք բարձր քան սլատակ փողոցաց . և տունք նր լո մեծի մասին ունին դեանափոր նկուղս , ցր մազուղայս կամարայտրկս մեծամեծս : Իսկ թիւ բուն բնակչաց նր է իբրև 60000 . թող զբաղմուի ստարական վաճառականաց , և անցաւորաց . յորոց մեծ մասն լուտերական են , իսկ այլք ուղղափառք , և կալվինականք . լուտերականք ունին անդ 12 եկեղեցիս . ուղղափառք 7 . յորոց մին էր յսեանց . որք ունէին անգ և վանս , և դպրոց հաշակաւոր . էին անդ և այլ մենաստանք կրօնաւորաց , որք թուի թէ բարձան , այլ եկեղեցիք նց մնացին . իսկ կալվինականք 2 . յորս երևելի է գլխաւոր եկեղեցիքս զարին՝ նուիրել ձծամօրն , որ է՛՛ ի ձեռս լուտերականաց . իսկ յայլ շինուածս՝ երևելի են մեծ գրատունն թղթին , սր նոյնպէս է՛՛ ի ձեռս լուտերականաց . և երկու հոյակապ խորհրդարանք . յորոց մին է՛՛ ի նոր թղթն , իսկ երկդն՝ ի հինն . այլև մաքսատունն , զինարտնն , և ժողովատեղին վաճառականաց կոչեցել Ալլադադ , ուր 'ի 1755 կանգնեաց թղթն կձեայ արձան 'ի պատիւ թիբրին օգոստոսի երրգի լէհաց արքայի :

Այս թղթ 'ի նախնուսն էր մի յերևելի բաղնովաճառ դաշնակից թղթաց անախ գերմանացւոց . սոյ և այժմ է՛՛ ի սակի գլխաւոր վաճառատեղեաց երբոպիոյ . զի իբրև հիւր նաւք , և առաւել՝ ափ ափ մտաննն 'ի նահնգիսա նր , որք բերեն արգի աղբի չուխայս , և այլ սկեսպէս ասուեղէն գործածս , և մետաքսայ կերպասս ծաղկեալս և անծաղկոս , և սակեթելս . և զանազան տեսակս գինոյ , ձէթ , աղ ,

աղ, երկաթ, կապար, դեղորոյս, և համեմն . այն է՝ պահար . առինկ ձուկն, ևն : Եւ անտի բարձեղ տանին ցորեան անբաւ, և այլ զանազան տեսակս արմտեաց, ար, մարթ, ճարուգ, կոգի, պանիր, մամ, մուշտակս վայրենի էրէոց, և այլ զնձն իրս . որք յայլ և այլ կողմանց լէհաց չ վիագուլա գետն էկեալ հաւաքին 'ի նւհնդիստ նր : Վրկ մեծ մասն թիրուեց եւրուպիոյ ունին անգ գործակալս քօնսօլ կոչեցել՝ ուն սովորուի է ունիլ յայլ երեւելի նաւահանգիստս և վաճառատեղիս :

Վաստաքին ամբուլթիք նր անոճանի են, մենգ յարեւմտեան և 'ի հիւսիսային կողմանս . ուր պատեալ է լերամբք, որք բարձր են ք զբարձրագոյն աշուտ բակս քղքին . յորս յաւեա նշանաւոր են Պիօֆուկերի, և Հակեւպերի կոչեցել լերինք : Յայս երկդ լեռան գոյր 'ի հնուսն դղուակ, որ հնիք լերամբն կալաւ զանուն 'ի բռնակալէ միոյ, որ կոչուր հակել . որ և անգ սորանաւ, և դղեակ նորա հրկէզ արարաւ : Գոյր անգ և գերեզմանատեղի սեպհական իշխանազան տոհմի ուրուք . ուն ցուցանէ արձանն դամբանական տիկնոջ, որ 'ի 1664 դասու անգ : Ոչ կարի ինչ հեռի անտի, տեսանի տեղին՝ չ որ 'ի 1734 յարձակեցան մոսկովք 'ի վր քղքիս, այլ ոչ կարացին աւնուլ . անգ տեսանի ցայսօր մեծ տապանն կմ վիհն, յորում հաւաքել կան ոսկերք հաղարաւորաց, որք մեռան յայնմ մարտի :

Կախինի պատմութիք սորին քղքի ցուցանեն, թէ հին տանգքայն գոյր յամին 997 . որ և էր յայնժամ քղք բարեկէն . իսկ նորն շինեցաւ 'ի 1311 'ի խաչակիր ասորեաց, և 'ի 1454 թօթափեաց զուծ խաչակրաց, ինքնակամ անձնատուր լեալ կասիմիրոյ լէհաց արքայի հիք պայմանօք ինչ, յորոց մի էր և այս, զի կարօլ իցէ դրամս հասունել : 'ի 1577 ոչ կամելով հնազանդուի մատուցանել ստեփաննոսի արքային, յնջ ք զհաստատել նր զնախնի աղատութիս իւր, նա ինքն արքայն ծանր զօրօք պաշարեաց զքղքն . ապա խոնարհել, հրապարակաւ ներումն ինդրեաց յարքայեն, չ նմին հատոյց տոյժս բիւմ գրամոց, և դարձաւ անգրէն 'ի շնորհս նորին արքայի . որ և հաստատեաց զաղատուիս նր, և թոյլ ետ շուտերականայ հրապարակաւ կատարել ըզպաշտամունս իւրեանց : 'ի 1709 ժանտախտ ստատիկ սնկաւ 'ի քաղաքիս, յորմէ մեռան մեծ մասն բնակչաց նր : 'ի 1734 մեծամեծ քանդմունս կրեաց

'ի զորաց մոսկովաց և սաբսոնացւոց սակս չքունեւ լոյ 'ի Թգր զերրդ օգոստոս կայսրընտիրն սաբսոնիոյ , և յարեւոյ զհեա ստանիսլաւոսի իբրև օրինաւոր Թգրի լէհաց , որ 'ի քաղաքի աստ կայր տպաստանեալ . որում կուսակից էին բօդօցդի մեծ իշխանն լէհաց , և դեսպանն դաղղիացւոց . այլ յուսահատեալ քղքին յօգնուէ զորացն դաղղիացւոց , որք չ ծով ունէին գալ հասանիլ յօգնութի ստանիսլաւոսի , և նա ինքն ստանիսլաւոս ծածուկ ճնայհաւ խոյս տոճեչ անտի , քղքն հնազանդեցաւ նմին օգոստոսի իբրև օրինաւոր Թագաւորի , և անիւրում :

Այս քղք էր ազստ քաղաք Թգրական . որ ունէր իւր սեփական տտեան՝ դատաստանի , և ատենակալս . այլ յանկանիլ նր չ արուք Թգրին պրուչիոյ , Թոճի Թէ նոճագեցան նախնի արաօնաւիք նր : Ամի ամի լինի սստ երևելի տօնավաճառ . սկսեալ 'ի 4 օգոստ' , մինչև ցաւարտ նորին ամսոյ . որ փոքր մի յճջ սկսել էր նսւաղիլ , և ամ թ ամէ դնայր յեղծումն , սակս ծանրաբեռն մաքսից , զոր եդեալ էր արքայն պրուչի 'ի վք ամ վաճառաց , զոր չ սահմանս նր անցուցել մոճանէին 'ի քղքն , 12 չ հարիւրոյ . նոյնափ և 'ի վք այնոցիկ , զորս հանեալ անտի , տանէին այլուր , որոց հարկ էր չ սահմանս նր անցանել . գոլով քղքն յամ կողմանց չըջապատեալ 'ի պրուչեան սահմանաց . այլ այժմ Թոճի Թէ Թեթևացուցել են ծանրութիք մաքսիցն :

Պրէշ Նեկրոսի : Է լեղու ինչ հողոյ նեղ , այլ երկայնաձիգ . որ չ մէջ պալտիկ ծովու , և երկուց առաջից վիսգուլայ գետոյն և վէնէտկեան ծոցոյ՝ ձգի մինչև 'ի բիլլաւ քղք : Նշանաւոր շինոճած նր է ամրոցն կոչեցեալ Միսիէ , կմ Վայսել Միսիէ , կալել շանուն 'ի վիսգուլա գետոյն , առ որով կառուցել է 'ի բերան արևմտեան առաջից նր , և է չ իշխանութե ասնցքայի , զոր 'ի 1734 առին սաբսոնացիք . հանդէպ նր 'ի միւս կողմն գետոյն է ամրոցն կոչեցել Վեդեէր շան : 'ի նոյն ցամաք լեղու գտանին 6 փոքրիկ գետքք :

Հեկէ : Է նեղ և Թիւրաթեք ցամաք լեղու ձգել չ ծովն պալտիկ . որ ձևացուցանէ զԲուրգերլիտ կոչեցեալ ծոցն : Իսկ 'ի ծագ այսր ցամաքի՝ է Հեկէ փոքրիկ քղքն . առ որով կարեն նաք խարխիս արկանել . բաց 'ի քղքէ աստի՝ են 'ի նոյն ցամաք լեղու 8 գետքք :

Օւկա : Է մենատան հռչակաւոր 4 մղանաւ հեռի 'ի տանցքայէ . շինե՛լ 'ի 1170 'ի սուպիսլաւ դքսէն . կի՞մ լա սյւոյ 'ի 1178 'ի սամպորիոսէ դքսէն բոմէսու նիոյ , և առճաւ բենեդիկականց . զոր երկցս հրձիգ սրբարին հեթանոս բրուսսք . ապա 'ի 1432 և 33՝ քանդեցաւ 'ի զօրաց պօհեմացւոց . այլ միշտ՝ անդրէն շինեցաւ ձեռնառնուք բարեպաշտ 'ի իսանաց . 'ի վերջոյ 'ի 1577 քանդեցաւ 'ի բնակչաց տանցքայի . այլ ստիպեցան տուժել 2270 ոսկի 'ի շինուածի մե նաստանին : Որ է մեծ և լարձակ . եկեղեցի նորս մեծաշէն և գեղեցիկ մեղգ 'ի ներքուստ . ունի 40 խորանս , յորս նշանաւոր է աւագ խորանն և ամպիոնն վն չքնադակերս ոսկեզօծ զարդուց . ուն և հոյակապ մասուռն տիրամօր . 'ի դասն թաղե՛լ կայ 'ի մարմարիոնեայ տապանի դուքսն հիմնադիր մե նաստանին , և որդիք նր . և յորմն եկեղեցւոյն տեսանին կենդանագիր պատկերք իշխանաց բարերարաց նր : Աստ 'ի 1660 'ի մայիսի 3 հաստատեցաւ խաղաղութի լէհայ ք շվէսս . որ առ յաւեժական յիշատակ՝ գրե՛լ կայ 'ի կձեայ տախտակ ադուցեալ յորմն մերձ 'ի մուսս եկեղեցւոյն : Այս մենաստան սյժմ է 'ի ձեռս շիտեքրսականաց . ուր սովորաբար բնակին իրրև 50 միանձուեր :

Բարսիլ , կի՞մ Բարսո : Քղք փոքր և դղեակ ամուր մերձ 'ի ծոց մի պալդիկ ծովուն . որ 'ի քղքէ աստե առնու զանունն : 'ի 1464 զինի երկար պաշարման սուաւ 'ի դանեաց . 'ի 1626 'ի շվէսաց . այլ 'ի հետեւե՛լ ամի անգրէն աւին լէհք :

Տերաւ , կի՞մ Տերաս : 'ի բարբառ լէհայ Չիլո : Է թփրական քղք փոքրիկ , այլ ամուր ու վիսգուլա գետով շինեալ ուն կարծի 'ի 1209 . յնշադոյն Սա . կի՞մ Սա կոչեր . և էր գլխաւոր տեղի մասնաւոր կոմսուէ որ ջրեցս հրկէզ եղև , և երկիցս առաւ 'ի շվէսաց :

Շէնէ : Թփրական քաղաք և դղեակ ու դէրս գետով , հիմնե՛լ 'ի 1180 . և զինի 6 ամաց հիմնարկուե նր քանդե՛լ 'ի բրուսսիացւոց . այլ փութով անդրէն շինեցաւ . զոր թևտոնեան կարգն դնելով , կի՞մ փոխանակուե՛ էառ յապետաց կարգին մալդայի :

Սրբիւրս , կի՞մ Սրբիւրս : Քղք թփրական փոքր , այլ բարեշէն , առ գէրս գետով . զոր մինչև էր ստացել զձև և զիշխանուի քղքի , սուպիսլաւ իշխանն բոմէսանիոյ ետ ասպետացն մալդայի . որք շինեցին անգ զեկեղեցին սրյն յովաննու կարապետին .

տին . ապա Էանց 'ի ձեռս Թևտոնեան կարգին .
յետոյ լէհք տիրեցին նմ :

Մեղէ . որ և կնէլ : Թաթրական քղք փոքրիկ 'ի տե.
ղին , ուր գերս գեան մտանէ 'ի վիսոգուլա : 'ի 1283
անկաւ ը արութք Թևտոնեան կարգին . ուր շինե.
ցին անդ բերդ : Եւ 'ի 1463 ստիպեցաւ քղքն անձ
նատուր լինիլ լէհայ . և 'ի 1626 , և 1655 շվէտաց :
Բնակիչք նր խառն են , ք ուղղափառք և լուսե.
րականք . ուր 'ի վերջին թմիս մի ոմն քարոզիչ լու.
տերականաց յովհաննէս կերց կոչեցել , պարտաւո.
րեցաւ կանգնել արձան 'ի պատիւ սբյն յովհաննու
նեբոմուցեան , 'ի պատիւ հայհոյուէ նր ըգէմ նո.
րին սբյ վկային :

Նայուուել : կմ Նեկէուուել : Եւ փոքրիկ քղք Թաթրա.
կան . որ 'ի միոյ կողմանէ ունի զվիսոգուլա գեան ,
խոկ 'ի միւս կողմանէ ըարձակ ճահիճս : Եւ է սա
քղք հին , զոր 'ի 1458 առին խաչակիր ասպետք .
այլ զկնի 6 ամաց' անդրէն ը արութ լէհաց նոմա.
նեցաւ , յորոց յետոյ 'ի 1655 առին շվէտք :

Համբուրգ . Փելտան . Դուսել . Քոնից . Սլուսա
ն : Են փոքրիկ քղքք 'ի փոքրն բովեոանիա :

Շվէյ : կմ Շվէյեէ : Եւ փոքրիկ քղք Թաթրական . որ
ունի գլեակ ամուր , զոր 'ի 1244 շինեաց սվեադ .
բէլք գուքս ըգէմ Թևտոնեան կարգին առ վիս.
գուլա գեաով . յետոյ 'ի 1340 շինեցաւ առ նովա
քղք , զկնի տիրելոյ Թևտոնեանց նախարրել զգլե.
կին . յորոց 'ի 1454 առին լէհք . և յամին որ զկնի
անդրէն տիրեցին նմ Թևտոնեանք . ապա գրծլ ա.
ռին լէհք . և 'ի 1655 շվէտք . և հուսկ ուրեմն վե.
րստին անկաւ ը արութ լէհաց , և 'ի նցէ էանց առ
բրուսսիացիս :

Գոուելիկերիա :

Մայլև Գոուելիա . և Բելիա . այլև Պալտալանուի կմ
Եւրոպիա գոուելիայ , կմ բելիայ , է մի յերից պալա.
տականուէց կմ նախարարուէց անախ բրուսսիոյ
լէհացուոց . որոյ գլխաւոր տեղիք են հեուագայքդ :
Գոուել , կմ Բելել . ը լէհ' խէլիս : Գլխաւոր քղք
այսր նախարարուէ մեծ , այլ բնակիչք նր սակա .
առ վիսոգուլա գեաով 'ի բարձրացել վայրի . հիմնել
'ի 1239 . զոր մի ոմն 'ի գքսիցն մատովիոյ ես կար.
գին Թևտոնացուոց . այլ զկնի թմից անդրէն անձ
նա .

նաստուր եղև լէհայ : 'ի նախնուսն ծաղկեալ էր վա-
ճառապանութի նր, և էր մի 'ի դաշնակից բազմա-
վաճառ քղքց անախ . յետոյ անկաւ Է արուսի եպիսի-
նր, Է որով եկաց միաց մինչև ցամա 1773 . յորում
նախարարութիւն գուրծոյ էանց 'ի ձեռս թիբին
պրուչի :

Գուրծնաւ . որ և խելոս : Բղք փոքր , 4 մղոնաւ
հեռի 'ի գուրծոյ , և աթոռ եպիսի նր . Այս եպիսա-
րան հին է քան զայլ եպիսարանս պրուչի լէհայ
զի հիմնեցաւ 'ի 1215 . կմ 'ի 1222 . 'ի կոռուարոսե
դքսէն մասովոյ :

Թօրն . 'ի բարբառ լէհայ Գօրոյն : Է քղք հին ք
զմալ քղքս պրուչի լէհայ , և առաջին յերես գլխա-
ւոր քղքս նր , առ վիտգուրա գետով հիմնեալ յա-
ռաջնոյ կարգապետե թեառնեան կարգի , որ կոչէր
երաննոս պալգ . նա 'ի 1231 կառոյց զթօրն դրեալ .
առ որով յամին որ զկնի ' շինեցաւ քղք . զոր սակս
անյարմար գրից նր ասի ' թէ քանդեցին , և 'ի 1235
փոխարեցին 4 մղոնաւ հեռի 'ի վիտգուրա գետոյն
'ի տեղւոյն , յորում է այժմ , որ թ հաւանական
կարծեաց ոմանց ' կոչեցաւ Թօրն , այն է ' Գօրոն .
Իբր զի եղև գուրն թեառնեան կարգին Է որ մօտին
'ի պրուչ . և զկնի Ժմիաց եղև երեւելի վճռուղի , և
մի 'ի դաշնակից բազմավաճառ քղքց անախ : Այս
քղք բաժանի 'ի հին և 'ի նոր , ունելով 'ի միջի ան-
ջրպետ պարիսպ , և խրամ , որք յուջագոյն էին եր-
կու զնիչն քղքք . այլ յետոյ միացուցան 'ի մի . ու-
նի բնակիչս իբրև 10000 , որք Է մեծի մասին լու-
աերական են , իսկ այլք ուղղափառք . գոտնին անդ
և կալվնականք , այլ սակաւք . ուղղափառք ունին
'ի քղքի անդ երկս եկեղեցիս . և երկու մենաստանս
հնդ ձ հոյնչափ եկեղեցեք . յնջագոյն և յնեանք ու-
նէին անդ եկեղեցի , և գարոց հօչակաւոր . իսկ
լուաերականք զերկու կմ գերիս ևեթ , յորոց զին
նորոգ շինեցին , զի ուղղափառք առին զեկեղեցիս
նց . կալվնականք չունին անդ եկեղեցի , այլ 'ի
սան կտտարեն զղաշտամունս իւրեանց : Յեկեղեց-
ւոջ սրին յովհաննու յօրինեալ կայ տապանագիր 'ի
պատիւ գերահօչակ աստեղաբաշխին նիկողայոսի կո-
պերնիկոսի , որ 'ի քղքի աստ ծնաւ 'ի 1472 'ի յուն-
վարի 19 : Առ սովին քղքաւ վիտգուրա գետն լայն
է յայժ . բաժանեալ յերկու առաջս 'ի ձեռն Պալաբ
կալոյն , յորոց մին կոչի վիտգուրա գերմանացոց ,
իսկ մեռն լէհայ , և ունի կամուրջ երկայն իբրև

կէս ժամու ճննիչ, որ նոյննոս բաժանի յերկու մաւ սունս . մին՝ որ է 'ի վր վիսգուլայի գերմանացւոց, կոչի կամուրջ գերմանացւոց . իսկ միւսն՝ կամուրջ լէհաց . որ ոչ գոլով այնչափ հաստաաւն, գրեթէ յիմամբ զմասն ինչ նր քանդել 'ի բաց տանին սառոյցք գետոյն . վայ և անբաւ ծախք լինին 'ի պահպանուի նր : Այս քղք 'ի 14:4 ելեալ 'ի հնազանդուէ թեւոնեան կարգին, ինքնակամ անձնատուր եղև արուե լէհաց . որ և բիւմ քանդմունս և աւերածս կրեաց 'ի սրտզմաց, և 'ի ժամտախտէ, որ երկիրցս դիպուա միմեանց զկնի . մի 'ի 1708, և երկր 'ի 1710. յորոց նուազեցան յոյժ բնակիչք նր : 'ի 3724. 'ի յուլիսի 16 'ի հանդիսաւոր թափօրի ուղղափառաց՝ մի ոմն 'ի յանդուգն պատմնեաց ուսանողաց 'ի դպրոց յծեանց երգիծանիչ բանիւք նախատեալ զըւտեբրականս, որք կային 'ի զնին թափօրի, յարեաւ խռովուի մեծ 'ի քղքին . որ յաւուր երկրի և ևս բորբոքել, ամբոխ ժողովեանն խուճա կազմել, բռնի մտին 'ի վանս և 'ի դպրոց անդր յծեանց, և բիւմ չարիս գործեցին անդ . սրում մեծագոյն ևս մնառք զհետ եկին, զի ոսնէր քղքապեան և այլք ոմանք լէ նմ՝ գլխատեցան, և քղքն պատժեցաւ 'ի տոյժս բիւմ դրամոց :

Շէնդէե . լւ լէհ՝ Գօլաւելօ : Քղք փոքր թիրական, աւ որով 'ի 1716 հարան դաշնակիցք լէհաց 'ի պօսէ սպարապետէն զօրաց սարսոնացւոց :

Պօլաւէ, կիմ Պօլաւայ : Քղք փոքր թիրական . որ ունի և դղեակ համանուն առ արեւմտից դետով, ուր գլխոյն աննա քոյր ք սիկիսմունդոսի արքայի, ընդ իւրով իշխանութեւնէն զըրջակայ վիճակ, սովորաբար ունէր զքնակուի :

Շարասպարի . լւ լէհ՝ Պրօտնէցա : Քղք թիրական, բարեշէն, և ամուր . ունի և դղեակ համանուն առ արեւմտից գետով . որ էր լէ իշխանութեւն նախայիշատակել զչխոյն, սւր և մեռաւ 'ի 1625 : Այս քուղք հիմնեցաւ 'ի 1285 . որ բիւմ պրոգնունս կրեաց, և 'ի ձեռս բազմոց էանց :

Ռեպէն . լւ լէհ՝ Ռապպին : Քղք փոքր թիրական, և ամրոց . որ բազում անգամ զփորձ էառ հրազէն ունեաց, և սրտզմաց :

Սրասպէնց . 'ի հն՝ Սրօպէտ . լւ լէհ՝ Սրասպետանս : Քղք թիրական 'ի կղզի ինչ Օսա վտակին, որ աստ խառնի 'ի վիսգուլա : Ունի դղեակ պատուական 'ի բարձրաւանդակ վայրի : 'ի 1645 յծեանք կանդնեցին աստ վանս .

վանս , և դարոց . որ 'ի 1647 հաստատեցաւ վճաւ
Տողովոյ թգրուէն լէհաց :

Նախարարութի Սարեհնդարիայ :

Սյս գաւառս կոչի և Պալապականութի . որ յառաջն
մինչ էր չեթորութեամբ լէհաց , ունէր իւր սեպ-
հական պալատական իշխան . որ և բաժանի յե-
րիս վիճակս , զորս Վէրքեր կոչէն . այսինքն Մեծ
վէրքեր Տարեհնդարիայ . Փոքր վէրքեր Տարեհնդարիայ , և
Վէրքեր Էլպիսիայ : Անունք Վէրքեր նշանակէ Երկիր
ցածուն , լճային , և արտաղտուկ , բազմաշխատ
տարժանմամբ գործել Երկիր բարի և արգասաւոր .
քանզի 'ի հնումն գաւառս այս դրեթէ ողջոյն այս-
պիսի էր , վնյ սու անպիտանուէն թողել կայր ան-
գործ : Իսկ այժմ է մի 'ի լաւագոյն դաւաց պրուշի
լէհաց , ունի զամ ազգս արմտեաց սուասասլէս , և
արօտս խոտաւէաս , և անասունս ընաիրս , մւնդ ե-
րիվարս , որք 'ի յարգի են : Բնակիչք այսց վիճա-
կաց կոչեցան միշտ դիւղականք ազաք . և բնակիչքն
վէրտէրաց՝ արքունի հոլասակք . որք ընկալան յաս-
պետոց թեւտնեանց կալուածս 'ի մշակուի : Սոքա
խօսին 'ի բարբառ դերմանայւոց և լէհաց . և լա-
ռաւել մասին՝ են լուտերականք և ուղղափառք ,
սակաւ գտանին կալվինականք . բայց մեմնոնեանք
բիւմ են : Գլխաւոր տեղիք Թուրս են հետագայք :
Մարեհնդարի . Թ լէհ՝ Մալպարի : Քղք թգրական
ամուր և բարեշէն առ նօկագ գետով . յորոյ վր սու-
նի փայտակերտ կամուրջ Երկայն իւրե 539 ոտնա-
չափ . յորոյ 'ի պահպանուի անբաւ ծախք լինին ան-
դադար . վն զի բունութի գետոյն գրեթէ յամ ամի
քանդէ զմասն ինչ նր : Աւնի և բերդ ամրացուցել
Թ հին սովորուէ . ուր յնջն պահէին գանձք պրուշի
լէհաց : Բուն բնակիչք քղքին գրեթէ բովանդակ
լուտերական են . բայց յարոճարձանս նր գտանին
և ուղղափառք բիւմ : 'ի նախնումն էր գլխաւոր ա-
թոռ կարգապետին թեւտնեան կարգին : Սյս քա-
ղաք բիւմ պնզմունս կրեաց , և լա բազմաց ձեռս
էանց . 'ի 1644 ամրոց նր այրեցաւ :

Մտո՛ : Փոքրիկ քաղաք թգրական , և գղեակ շին-
եալ 'ի 1249 . կմ լա այլոց 'ի 1278 . զոր յետոյ առին
լէհք 'ի թեւտնեան կարգէն : Իսկ 'ի 1626 և 1656
չէաք արեցին նմ : Արնչ կարի բացագոյն աստի՛

է Սրահորթ գետն . ուր 'ի 1629 հաստատեցաւ
 գաղարուճն զինուց ը շվէտս և ը լէհս ը ամս 6 .
 որ ասպա 'ի 1635 հրատարակեցաւ աստ ը ամս 26 :
 Էլպիսի . 'ի բարբառ լէհաց Էյպուսի : Է քաղաք բա-
 րեշէն և բազմաձայնաւ առ Էլպիսի գետով , հիմնել
 'ի 1239 . որ բաժանի 'ի հին և 'ի նոր , անջրպետ 'ի
 միջի ունելով պարիսպ , և խրամ առ նովաւ : Փա-
 զոցք նր նեղ են ը փողոցայն տանցքայի . և շին
 սեւծ տանցն բարձր , այլ անշուք ը վազնջական
 ձևոյ : Իսկ բնակիչք նր ըստ կրօնից խառն են , յո
 ուղղափառք , լուսեռականք , և կալվինականք , ուք
 ունին սեփական եկեղեցիս . բայց գլխաւոր եկեղե-
 ցի քաղաքին է 'ի ձեռս ուղղափառաց : Այս քաղաք
 'ի 1454 ել 'ի Թրուէն Թեառնեան կարգին , և անձ
 շատուր եղև Թրուէ լէհաց . այլ յետ այնորիկ բազ-
 մասպարիկ պայմանս կրեաց , և 'ի ձեռս բազմա-
 կանց . հուսկ յետոյ անկաւ ը Թրուէ Թաղաւորին
 սրուշի :

Քրիստոսոսի , կի՞ Քիշֆորտ : Քաղաք Թիւրական , և
 գղեակ վազնջական հիմնեալ 'ի 1247 առ սիրկունէն
 գետով . որ յայնկայ Էլպիսիայ մտանէ 'ի Տրուէն
 լիշն :

Կայրէի : Քաղաք փոքր Թիւրական առ շվէնգի գե-
 տով հիմնել 'ի 1329 . որ և բլմ քանդմանս և աւե-
 րածս կրեաց 'ի պիճմաց , և 'ի հրկիզուեց :

Դուքիսի : Քաղաք փոքր Թիւրական առ վէնէակեան
 ծոցով հիմնեալ 'ի 1365 .

Ելպիսիս . Էլպիսի :

Այս դաւառ տիրանս կոչի Եպուսի Վարդայ . վն զե
 մինչև եր անկե՛լ 'ի ձեռս սրուշի արքայի բոլոր
 դաւն եր ը Թրուէ եպսին վարժիոյ . որ և չքապա-
 տել էր յամ կողմանց 'ի Թրուէն բրուսիայ . գլխա-
 ւոր տեղիք նր են հետագայք :

Պոսիկոսոսի : Քաղաք բարեշէն առ վէնէակեան
 ծոցով . հիմնարկուի նր եղև 'ի 1279 . աստ նսալ ժո-
 զովն կանոնիկոսաց եպսական եկեղեցւոյն . յորոց մի
 էր և գերահոշակ աստեղաբաշին սիրկոզայտ կոսկրնի-
 կոս . որ անգ մեռաւ 'ի 1543 'ի մայիսի 24 :

Պրանսոսի : Քաղաք բարեշէն և բազմաձայնաւ առ
 բասսարկէ գետով , որ մծա յայտ տեղն մտանէ 'ի ծոցն
 վէնէակեան : Հիմնարկուի նր եղև 'ի 1255 . և կա-

լու զանուն 'ի պրուսոնէ եպսէն բրակայի : Բաժանի
'ի նոր և 'ի հին քղք . և ունի գեղեցիկ և կեղեցի և
մենաստանս . յորս երևելի է մայր եկեղեցին՝ որ
չինեցաւ 'ի 1260 . Է նմին և կանոնիկոսարանն վն 16
կանոնիկոսաց : Երևելի է և դպրոցն յնեանց , հիմն
եալ 'ի հռչակաւոր և 'ի մեծիմաստ կարգինալ եպսէ
երմեւանախոյ սգանիսլաւոսէ օսիոսէ . որ և յայն
ոակս կոչի դպրոց Օնոնեան : Այս քղք 'ի 1461
եւելի 'ի արուէ լէհաց , եմուա Է իշխանութեանն
երմեւանախոյ , որ համախոհ էր Է թեւոնեան կար-

գին :

Մէլատ : Քղք փոքր , և գղեակ սու Վալէ վտակաւ .
որ խառնի 'ի բասսարիէ գեան :

Վարճարար , կժ Վարճար 'ի բարբառ լէհաց Օրնէ
րա : Է քղք փոքր և գղեակ սու Տրէլնոյ գետով .
չինելի 'ի 1316 :

Հայլսպերի : Քղք գեղեցիկ սու Ալլէ գետով . որ
ունի և գղեակ պատուական . որ էր աթոռ եպսին
երմեւանախոյ : Ասի թէ քղքս այս չինեցաւ 'ի 1240 .
որ 'ի 1521 գրեթէ բովանդակ այրեցաւ , այլ յետոյ
վերստին չինեցաւ :

Պիտոքարայն , կժ Պիտոյն : Քղք փոքր , հիմնելի 'ի
1326 . որ 'ի 1455 առաւ 'ի ձեռաց թեւոնեան կար-

գի :

Կարտարար . Ալլէնարայն . Է լէհաց Օւրդինի : Են
փոքրիկ քղք 'ի քառասն :

Վարէնպարի : Է քղք փոքր և գլխաւոր տեղի մաս
նաւ որ վիճակի առ բրասդէր գետով . հիմնելի 'ի 1325 .
որ 'ի 1455 անձնատուր եղև թեւոնեան կարգին ,
և 'ի 1494 այրեցաւ . բայց ասլա անդրէն չինեցաւ :





Լ. Շ. Խ Լ. Ր Հ. Ժ:

ԼԵՀ, ԿՄ ԼԵՀԱՍՍԱՆ. և ԿՄ ԲՕԼՕՆԻԱ:

ա. Աշխատ:

Առևրաբար զայս Տ կոչեմք լը աճ" ԷէԿ, ԿՄ
 Լէհաստան, ուր և զընակիչս նր Լէհո, ԿՄ
 Լէհայիս. այլ և իւրիս. ինքեանք զազգ իւր
 Յանց կոչեն Փօփօլցոս. իսկ եւրոպացիք զՅն կոչեն
 Բօլօնի. և զընակիչս Բօլօնի, ԿՄ Բօլտի. որ թոճի
 թէ ելանէ 'ի Բօլէ անուանէր, որ առ լէհո նշանակէ
 Երկիր տափարակ, ԿՄ դաշտային: իսկ 'ի հնուսն
 զոյգ Է մոսկովաստանու անուանէլ կոչէր Սարմափս
 եւրոպոյ, առ 'ի զնիչնութի յասիական սարմատիոյ:
 Ունի իւր սահման 'ի հիւսիսոյ և յարեւելից՝ զմոսկու
 վաստան, և զԹիբուլին բրուսսիոյ. 'ի հրւոյ՝ զմուլտա
 վիա զգրանսիլլանիա և զմաճառաստան՝ յորմէ բաժա
 նի դարբադեան ձիւնտպաա ցրտասառոյց լերամբք.
 Իսկ յարեւմտից՝ զգերմանիա. և մասամբ իմն քերէ և
 առ պալզիկ ծովու 'ի հիւսիսոյ և յարեւմտից:

բ. Տարածութի, և Բաղմամբոսի Լէհոյ:

Լէհ լը նշանակել սահմանացդ առել, անկանի Է
 մէջ 34 և 50. ասս" երկայն". և Է մէջ 47 և 58
 ասս" լայնուէ. ուստի երկայնութի նր յարեւելից յա
 րեւմուտս՝ է իբրև 976 մղոն, իսկ 'ի հիւսիսոյ Է հա
 բաւ՝ 671. և բովանգակ սարածութի լը սիլեինկայ
 է իբրև 214400 քառակուսի մղոն Տագրական: Ունի
 Քղքս բիւն, որք լը մեծի մասին անշուք են, և ան
 պարիսպ: իսկ թիճ բնակչաց նր լը հնրկ հաշոճի
 հասանէ 912 ԿՄ 13 միլիոն, զոր ոմանք նուագեցու
 ցանեն ցեթն միլիոն և 600000. յորս բաց 'ի բնիկ
 լէհաց և ռուսաց ԿՄ ռուժէնաց դտանին և բազմութի
 գերմանացոց. և առաւել ք զմմ ազգս՝ հրէայք:
 Են անդ և յւրգէս մերմէ սփռելք 'ի զնիչն Քղքս,
 ուր ունիմք յիշա. ակել յիւրաքանչիւր տեղն. որոց
 նախնիք զառաջինն գնացին անդր 'ի 1062, ուր ցու
 ցանէ հրովարտակն թէոգորոսի որդւոյ զուպ դե
 մետրեայ մեծի դքսին կաթիբ ռուսսիոյ, որք 'ի
 հնուսն

հնու մն բաժմ էին . այլ այժմ առ համեմատութեամբ առ
ապրիոյն՝ կարի նուագեղ էն . Ը մասին 'ի լէհ փո
խարկեղք կիմ լէհացեղք , և ը մասին անցեալք 'ի
գրանսիլվանիա . վնյ այժմ ը առաւել հաւանական
հաշուէ 'ի հազիւ գասանին ը բովանդակ լէհաստան
10000 որիք ը մեծ և ը փոքր : Այլ զայսմանէ ը
արձակագոյն աւանդեսցուք ստորև 'ի Թիւն Թ որ
գրարուց :

Գ. Երեւելի գեոր Լէհայ :

Ա ի գոռա . գերմ" Վայտել . լէհ" Վիսա : Եւանէ
'ի շէգիոյ 'ի դէսքէն քուէ , ուր սկսանին գար
բադեան լերինք . և անցել ը բուն լէհ , և ը բրուս
տիա , յինքն ըունի վտակս բնմս , որով և ըար
ձակի յոյժ . ապա մերձ 'ի սանցքա քղք բաժանի
յերկու առջս , և գնայ զեղու 'ի ծովն պալգիկ :

Տեւդեր , և Տեսարիս , կիմ Նեւդեր . 'ի հն" Տեւրա ,
կիմ Տեւրես . աճ" Դոռուա : Եւանէ 'ի լճէ միոյ մերձ
առ գարբադեան լերինս , և անցել ը մէջ լէհաց և
մուտավիոյ , մտանէ 'ի սեաւ ծովն :

Տեւէր , կիմ Տեւէր , կիմ Նեւէր . 'ի հն" Տեւբարիս . և
Վորիսեւելիս . լտ" Պորիսեւելիս . աճ" Օղոս սոյի : Եւանէ
'ի լերանցն պուտինայ , որ 'ի մակոլս , և ընթացել
ը 40 աւուր ճիւղի , մտանէ 'ի սեաւ ծովն :

Պոի , կիմ Պոլ , և Պակ . 'ի հն" ը շէլբարիոսի Իբանիս .
իսկ ը հարտուինոսի Ալսիակս , կիմ Ալսիակիս . աճ"
Ալս սա : Եւանէ 'ի բոտովիոյ , և խառնի 'ի աներէր
գետն :

Տանա . ը լէհ" Տէինա , կիմ Ճէինա . 'ի հն" Տանա
գոսպո : Եւանէ յճէն մակոլայ , և անցեալ ը լիգ
վանիա , մտանէ 'ի ծովն պալգիկ :

Մեւել . լէհ" Նեւելի . 'ի հն" Քրոնա : Եւանէ 'ի նո
վոկրոտէք քուէն , և անցեալ ը լիգվանիա , և ը
բրուստիա , մտանէ 'ի ծոցն կուրոնեան . զոր 'ի ներս
ծուէ բրուստիոյ արուէ ը արձակագոյն ստորագրե
ցաք :

Վարտա : Եւանէ 'ի քուէն գրագովիոյ , և յայնկոյս
գուսգրին քղքի խառնի յտէր գետն :

Բըւէլ . լտ" Բըիէլիս : Եւանէ 'ի գուլմ կիմ քէլմ
քուէ որ 'ի կարմիր ուստիա . և գնայ խառնի 'ի
աներէր գետ :

Բըւոդ : Եւանէ 'ի սահմանաց գրանսիլվանիոյ և լէ
հայ , և անցել ը մուտավիս մտանէ 'ի գունա :

Գաանին յՅի աստ և ծովակ. ք և լիճք յօլովք, յորոց
 ոմանք բերեն ձուկն առաս, ուրի է և ծովակն ան-
 ունանել կօրէրէն, 'ի Պրդէյոց քաւի 'ի գույալիա-
 որ մեծ է ք զայլ ամ ծովակս լէհաց. երկայնուծի
 նր է 20 մղոն, իսկ լայնուին 2 :

Գ. Օր Լէհոց :

Րնդհանրապէս խօսելով ցրտային է, ոյլ մաքուր
 և քաջառաջ. բայց ուրեք ուրեք, մենդ 'ի լիդ-
 վանիա՝ բաց 'ի ցրտուէ, թանձր և դիճին, ուստի
 և յուի, որ պիտէի 'ի բազմապատիկ լճից և 'ի մեռ-
 եալ ջուրց, որք գտանին անդ. վն վի պլատոր և տղ-
 մախաուն ջուրք նց շնչեն հնդդ (բայց առաւելապէս
 յամառան) շողիս դանգաղամածս և ժահահոտս,
 որք տպականեն զօդն. վն բնակիչք լիզվանիոյ ա-
 համեմատուք չ արձակ տարածուե իւրոյ սակա-
 են :

Ե. Բերտ Լէհոց :

Երկիր սր պարարտ է յոյժ և արգաւանդ, մա-
 նաւանդ 'ի բոտոլիա, 'ի վոլինիա, յուգրա-
 նիա, և 'ի փքքր ուուսիա, որսէս և 'ի լիդվա-
 նիա. բերէ ցորեան և սյլ ազգի ազգի արմտիս ա-
 սատ յոյժ. թէպտ մշակուի երկրին՝ չէ այնպէս բար-
 դաւած ուր արժան էր, սակայն 'ի վր այսր ամի
 այնչափ առատ են բերք նր, զի գրեթէ յամ ամի
 իրրե 4000 նաւակք և լաստք բեռնաւորելք ը
 մեծի մասին ցորենով, և սյլովք արմտեօք, չ վիւ
 դուլա դեան անցտենն 'ի տանցքա : Բեզմաւորու-
 թի լէհաց յայտ է և ստափ, զի 'ի 1701 էն մինչե
 յ1718 անլէհատ պիտմուկը եղեն 'ի նմ. բայց նո՛ւ
 զուի հացի բնաւ ոչ եղև : Սակայն և այնիպէս ճանա-
 պարհորդք 'ի պանդոկս դաշտաց ոչ գտանեն կերա-
 կուր, կի՛ հազիւ ուրեք. վն և բոնագատին զպա-
 րէն ճանապարհի բիւ՛ անգամ առնուլ 'ի քղքց, և
 տանիլ չ ինքեանս. պիտն այսորիկ ասեն լինել
 բուն լէհացիքն, զի դնացել 'ի պանդոկս ուտեն և
 ըմպեն, և ինչ ոչ վճարեն. յայն սակս և պանդոկա-
 պետք ոչինչ պտրասեն. ուստի բիւ՛ անգամ և ոչ
 խոտ իսկ վն երիվարաց գտանեն անդ ճանապար-
 հորդք : Ունի և բազմապատիկ դաշտս մեծամեծս
 լայնածաւաղս խոտաւէտս պարարտարօտս. յորս
 բիւ՛

բշմ ուրեք մէնգ 'ի բօտօլիա՝ այնչափ բնորձրանայ
 խոտն, մինչև ծածկել զարջառս որք արածին 'ի նս =
 Անի և անասունս անհամարս, զոր արջառս մեծա
 մեծս և յալթանդամս, յորոց ամի ամի վաճառեն
 օտարաց իրր 80 կմ 90000. որք անուճանի են յեւրո
 սիա : 'Նոյննոս և երիվարս ընտիրս, զօրաւորս, գե
 ղեցիկս, և արագընթացս, և հօտս խաչանց, և հօ
 բանս այծից . ուստի և կոգի, և պանիր, և ճարսք
 աւնի առատ և սլատուական . այլ և վուշ, և կա
 նեփ, մեղք և մոմ : Իւ ևս վայրենի էրէս բազմատե
 սակս, ոչ միայն հնրկս, պք և յայլ անդիս դտա
 նին . զոր արջ, գայլ, աղունէս, սամոյր, եղջերու,
 նապաստակ, աւնէտ, ջրուռն, այծեամս, վարազ,
 զոր լէհք ճիք կոչեն են . այլ և մտնաւորս և սա
 կաւագիւաս, որպիսի են Ալլէս, կմ Ալլէ . լը լէհ՝
 Լօտ կոչեցել . որ է 'ի չափ մեծ երիվարի . սուս նր
 և ոտք և կճղակք՝ նման են եղջերունի . գլուխն՝ ձիոյ .
 մորթն և ախանջք՝ նման իշոյ . բայց եղջերաւոր է
 և արագընթաց . լը գետս լողալով անցանէ . միս
 նր համեղ . իսկ մորթն է 'ի պէտս զօրաց, յորմէ
 գործեն անգրավարտիս և այլ զանազան կազմածս
 սլոճնէն զինտէրուռն : Ենա . լը դերմ՝ Աիլ Փրաս .
 իսկ լը լէհ՝ Բօսամաք . որոյ գլուխ նման է գլխոյ
 կատունի, մարմինն և ձեռն աղունիսու . իսկ մեծու
 թին 'ի չափ շան մեծի : Գտանի յանտառսն որ լը մէջ
 լիգվանիոյ և ուստիոյ : Պիտոն . լը լէհ՝ Ժուպու . որ
 է նման եղին, բայց առաւել ստուճար է և յալթան
 դամ : Վայրենի նոխաղք, որք առ հնրկ միակզուր
 են, յաճախելք 'ի գաշտաւայրս անքնակս և ամայիս :
 Եղն վայրենի՝ լա՝ Ուռուս . լինի 'ի մաստիլիա : Եւ
 տեսակ մի էրէոյ, լը լէհ՝ Սուհաք կոչեցել . որ
 սէս օտուղս , մենդ շաղանակ սուսու . սակայն 'ի
 վր այսր ամի արք տեղւոյն յամարան գնան յօտար
 Ծս , մենդ յիդալիս 'ի շահիլ գրամս . Թողել զմա
 կուի երկրին՝ կանանց : 'ի 1512 կործանել երկուց
 լերանց , իցին զանցո Պլէնէօ գետոյն , որ հոսի Է
 մէջ այսր ձորոյ . յորմէ յորդել գիլաջքան ջուրք նք .
 և հեղեղել ծածկեցին զձորն ամ . որ և եկաց մնաց
 այնդէս ջրալից ամս երկուս . մինչև ուր ուրեմն
 բացել ջրոյն ճննդհ , զեղաւ յերկայն լիճն . և ցու
 մաքեցաւ երկիրն : Այս ձոր բաժանի յերկու մա
 սունս , զորս կրեսս , կի՞ Ծակատս անոճանեն . յի
 'ի վերին , 'ի միջին , և 'ի ստորին : Չիք 'ի նմ՝ քիւք ,
 և ոչ սւան . այլ միայն գեօղք ինչ , որոց գլխաւորքն
 են Ճիւճե . Մալալա . Լեւորիս . Լուրիս . Օււ
 լան :

Լուլանօ . ի գերմ՝ Լուիս . Լուսիլերս : Է գլու փոքր
 կի՞ վիճակ 'ի հիւսիսակողմն միլանու , ունի գեօղս
 և աւանս 106 . և բնակիչս իրրև 53000 . զոր 'ի 1512
 մաքսիմիլիանոս սփորանան գուքան միլանու , ետ հաւ
 սարակու թէց հեղվետացուց , որք առ նսվին Գիկոք
 12 ևեթ էին . վն ձեռնտու լինելոյ նի՞ Էդէմ գաղ
 պիացուց , առ 'ի անդրէն յինքն ընկրկել զտրու թի
 միլանու : Եւ եկաց մնաց Է տրու քնի՞ , մինչև ցվեր
 ջին Գիկս , որք կառավարէին զնա 'ի ձեռն հիւպա
 տոսաց , զոր փոփոխակի կացուցանէին յիւրաքանչիւր
 երկու ամս : Այլ այժմ թոճի թէ յօդեալ է 'ի նոր
 հարկադեաուին իդալիոյ : Այս գլու մենդ վիճակ բա
 ժանի 'ի չորս փոքր վիճակս , կի՞ հանգրոճանս . և ու
 նի իւր համանուն գլխաւոր տեղի զաւանն՝ որ զկնի :
 Լուլանօ , կի՞ Լուլանոս : Աւան մեծ առ լճիճ միով ,
 որ յանուն նք կոչի Լիճ Լուլանօի , որոյ երկայնուին
 է իրրև միոն մի և կէս . իսկ լայնու թին իրրև կէս
 միոն . և փոքր մի աւելի : Այս աւան բաց 'ի մայր
 եկեղեցւոյն իւրոյ՝ ունէր 6 միւնաստանս , 3 արանց ,
 և 3 կանանց . որք այժմ թոճի թէ բարձեալ են :
 Լոգուօ . ի գերմ՝ Լուլիարիս , և Լուլիարս : Է վի
 ճակ Է մէջ միլանու , և Մաճճիս իւրոյն , առ եր
 կայն լճիճ՝ որ կոչի և Լիճ Ռեծագոյն . 'ի հն՝ Լիճ
 վեր

Վերդանէան . Ը Թրուբ Ժք հարկուեց զվիցցերաց , և ունի իւր համանուն գլխաւոր տեղի . որ է աւան փոքր :

Մածճիւտ : Վիճակ , կմ ԿԼԱ փոքր 'ի հիւսիսակողմն Լօգարնօի . երկայնուի նր է 7 մղան . ունի բնակիչս իբրև 24000 . և էր Ը Թրուբ Ժք հարկուեց զվիցցերաց : Չիք 'ի նմ' քղք , այլ միայն քանի մի գեօղք , և երկու աւանք , յորոց գլխաւորն է Մածճիւտ աւանն . յորմէ և գաւառն ունի զանուն :

Մէնաբէո : Վիճակ 'ի հարաւակողմն Լօգարնօի . ունի բնակիչս իբրև 15000 . և էր Ը Թրուբ Ժք հասարակուեց զվիցցերաց . գլխաւոր տեղի նր է Մէնաբէո : կմ Մէնաբէոիմ աւանն . որ ունէր 3 մենաստանս , բայց 'ի մայր եկեղեցւոյ իւրոյ :

Յօդ ք . Բնկերակիցք (ը դաղղ" Լասօցիէ) Ս վիցցերաց :

Բնկերակիցք զվիցցերաց առիննք , զորս հարկուեալ թիք նց ընկալան Ը պաշտպանուբ իւրեանց . որք և համարեւ են իբր քղքական անգամք նոցա . սուտի և ունին իրաւունս յըհանուր Ժողովս նց : Եւ այսպիսի Թրուբ են սք . Վիճակ սքն Գողղսի . 'իօկէպարի . ՄԲ Գողղս Գողղսն . Պիէննա Գողղսն , յառաջագոյն և Մալիսիա և Հալիսի Գողղսն . զորս յառաջիկայդ ստորագրեսցուք :

Վիճակ սքն Գողղսի , տիրապէս կոչի ԱԶԲայուբ : Վն զի է Ը իշխանուբ արքային մենաստանի բենեգիկ տեանց . զոր 'ի ը դարուն առեն հիմեւ ը սքն դաղղսի իւշանտացւոյ , և ը սմանց սկովախացւոյ . որոյն իտարք հանգուցեւ կան պատուով յեկեղեցւոյ այնր մենաստանի . որ և յանուն նր կոչի սք գաղղոս : Ապա զկնի Ժմկց առ սակաւ սակաւ շինեցաւ քղք առ նովաւ , և այն ևս կոչեցաւ ՄԲ Գողղս . որոյ և շրջակայ ոլորտ էր Ը իշխանուբ արքային նախասացեւ մենաստանին : Այլ 'ի 1454 դաշնակցեւ Ը 6 գաւառս զվիցցերաց , եւ յիշխանուբ արքային . և եղև ինքնիշխան հարկուի . վնյ և մեք ուրոյն ունիմք նշանակել ստորև իբրև մասնաւոր հարկուի . ստորագրելով նախ յայսմ վայրի զվիճակն՝ զորմէ է բանս . և զայլ կալուածս , յորս տիրէ արքայն սքն գաղղ .

գաղղոսի : Արդ՝ այս վիճակ՝ որ կոչի և Գաւառ
 քանն այ, յարեւելից՝ ունի իւր սահման զվիճն կոս-
 տանդիոյ, և զձորն Բէնօի . 'ի հարաւոյ՝ զարբէն-
 ցէլ . յարեւմտից՝ զգօկէնայուրկ, և զթուրկաւ . իսկ
 'ի հիւսիսոյ՝ նայնպէս զթուրկաւ : Երկայնուի նր է
 իբր 9 ժամուց ճննչ . իսկ լայնուին իբրև 5 ժա-
 մուց և եթ : Սենի բնակիչս իբրև 45000 . որք առ-
 հորկ ուղղափաւ են : Քաղաքական կառավարութի
 նր էր 'ի ձեռս ոմանց միանձանց վերոգրեի մենա-
 ասնին, և ոմանց Յականայ այլ այժմ մտ ինչ փո-
 փոխեցան : իսկ գլխաւոր տեղիք նորա (Թոզ զճք
 գաղղոս քղքն , որ ոչ ևս է ի արուք արքային ,)
 են սք :

Անլ, կթ Վայլ : Քաղաք փոքրիկ և գլխաւոր տեղի
 այսր վիճակի . միանգամայն և աթոռ հիւսաատսին
 չորից փւռաց զվիցցերաց . որք են պաշտպան ար-
 բայութե սքյն գաղղոսի , այլ և փոխանորդի ար-
 բային . որ էր մի ոմն 'ի միանձանց նոխադրեալ
 վանաց :

Ռուլի : Աւան մեծ մօտ 'ի լիճն կոստանդիոյ . ուր
 'ի 1714 եղև ժողով իշխանաց , առնել խաղաղութի 'ի
 մեջ արքային սքյն դաղղոսի , և երկուց դաւառաց
 զվիցցերաց պեռնայի , և ցուռիկոյի , այլ ինչ ոչ վճա-
 րեցաւ . զի արքայն ոչ հաւանեցաւ ի պայմանս ,
 որք առաջի եղան նմ :

Լեմեւելայ . Շխառ-պենցել . կրոպ : Են գլխաւոր
 գեղք այսր վիճակի :

Գօլիեպոսի : Ե մասնաւոր կոմսութի ի մեջ թուրկա-
 ւայ , ցուռիկոյի , կասթերայ , սարկանայ , կամպսայ ,
 և արբէնցելայ : Երկայնուի նր է իբրև 10 ժամուց
 ճննչ . իսկ լայնուին 3 և եթ : իսկ բնական հան-
 գամանք երկրին՝ նման է արբէնցելայ , և սյւրց լեռ-
 նային դաւառաց : Թիւ բնակչաց նր է իբրև 46000
 որոց գրեթէ երկու մասն կալվինական են . իսկ
 մնացեչքն ուղղափառք . և է ի իշխանութ արքային
 սքյն գաղղոսի : իսկ գլխաւոր տեղիք նր են :

Լիբոնիլայ : Քաղաք փոքրիկ , և գլխաւոր տեղի
 այսր գաւառի , առ թուր գետով . որ ունի երկու-
 դղեակս հին և նոր . յորում բնակի կուսաղալ հիւ-
 պաստան . և բնակիչք նր խառն են , կալվինականք
 և ուղղափառք :

Վոտելու . Շքոպերի . Նեսա . Օպերիտ : Են գլխ-
 աւոր գեղք այսր վիճակի :

ՄԷ գաղղոս : Ե քք երևելի ի մեջ լեռանց , մերձ
 ճէ

'ի Սևայնաի գետն . ունի 4 կմ 5 եկեղեցիս . յորս երևելի են եկեղեցիք սբյն լաւրենտիոսի , և սբյն մարտիրոսի . և գարոց մի մեծ : Բնակիչք նր կալվի նական են : 'ի 1415 բղվք 'ի վաճառականաց կոտանդիոյ քղքին' եկել բնակեցան յայս քղք . որով և բարգուաճեցաւ քղքն , և ծաղկեցաւ վաճառաւ կանուծի նր . որոյ գլխաւոր վաճառք են վելդէն կտաւք : Կառավարուի նր է ռամիպետտիան . վնդի մմ քղքացիք 'ի ժեւամենից և 'ի վեր' կարեն մտանել 'ի մեծ ժողով նր : Իսկ կնիք կմ նշան նր է արջ սեաւ , ունելով 'ի պարանոցն մանեակ ոսկի 'ի վր սպիտակ ենթակայի : Այս քղք մեծամեծ մնասկրեաց 'ի պտղմաց , և 'ի բազմապատիկ հրկի զուեց : Ըջլակայ վիճակ նր փոքր է յոյժ , և անբեր . Իսկ թիւ համօրէն բնակչաց քղքին , և շրջակայ վիճակի նր' հազիւ ժամանէ ցՅ300 ոգիս : Պիէննա . լն գերմ . Պիւ . լն գաղ' Պիէննա լա . Պիէննա . Պիէննիս : Ե քղք երևելի առ շիս գետով , ոչ կարի ինչ հեռի 'ի բերանոյ , Է որ այս գետ մտանէ 'ի պիէննա լիճն : Երկու գլխաւոր եկեղեցիք են 'ի ծմ' , մի սբյն բենեդիկոսի . և միւս ևս սբյն յովհաննու . առ որով յառաջագոյն գոյր և մեծաստան կարգին սբյն յովհաննու եղէմացոյ . բնակիչք նր կալվինական են . Իսկ նշան նր են երկու տապարք իտալոձև 'ի վր միմեանց , 'ի վր կարմիր ենթակայի : Այս քղք 'ի վաղ Ժմից է Է իշխանութ եպսին պասիլիոյ . որ ունի անդ հիւղատոս զմի ոմն յատենա կալաց փոքր ժողովոյն , կմ զայլ ոք յազնուականաց անաի կալվինականաց բնակչաց իւրոյ վիճակի . ու բում փոքր ժողովն քղքին ամի ամի յեկեղեցւոջ երգնու զհաւատարմութի . ապա և ինքն երգնու պահել զպարտաւորութիս իւր . զնայն առնէ և բոլոր քղքն լն դաշնագրութե եղելոյ Է եպսին 'ի 1610 : Այս քղք 'ի 1352 արար զմշտնջենաւոր դաշնագրութի Է պէննա քղքի . և 'ի 1382 Է սոլորնօի . և 'ի 1496 Է Ֆրիպուրկայ . յայն սակս դասի 'ի թիւ ընկերակցաց զվիցցերաց , և ունի իրաւունս յԷհանուր ժողովս նյ :

Յօդ Գ . Դաշնակիցք . (Ը գտողը " Աւիկ)

Օվիցցերաց :

Դաշնակիցք զվիցցերաց տիրապէս ասին նք , որք են մասնաւոր ինքնիշխան հնրկուլք , անկախ 'ի ժգ հորկուլեց զվիցցերաց . բայց գաշնակցելք Է նն 'ի պաշտպանութի միմեանց : Եւ այսպիսիք են կրիստիա հանգերձ հպատակոք իւրովք . Վաւեիա . Սաւահաւիա գաղաթն . Նեոիոնեան կասակաւաթն . և Ճիւնիլա գաղաթն . զորս յնշիկայդ ստորագրեացուք :

Կրիստիա . 'ի հն" Ուեցիա :

Առջին սք իա" կրիճէօնի , կիճ կրիչիճի . ի գերմ" կրիստիոսի լանք . յարեւելից' ունի իւր սահման գլխորօլ . 'ի հարաւոյ' զսահմանս վենետկեան քրուէ և զվիլան . յարեւմտից' զպելլինձօնա և զուսի . 'ի հիւսիսոյ' զկարիս և զսարկանս : Երկայնութի նր է 105 մղոն . իսկ լայնութին նաճալ : Գլխաւոր գետք նր են Ռէնօ . Ինն , 'ի հն" Ենու . Ապա . 'ի հն" Ալբրուս : Երկիր նր շեռնային է , և ի մեծի մասին սպառսժուտ և անբեր . սակայն ունի ուրեք ուրեք դաշտ և հովիտս արգասանգս . որք բերեն ցորեան , և այլ արմախս , և աղցի աղցի պաուղս , և գինի պատուական . ունի և բլմ արօտս անասնոց պարարտս և խոտաւէտս , և տնասունս բիւն և ընտիրս , զի խոզ , տրջառ , օջիտար , և այծ . յորոց գործեն կոզի և պանիր բլմ , որք են գլխաւոր վաճառք նր . բայց երկար սակաւ յոյժ , որք թէպէտ ուժեղ են , այլ ագեղ տեղեանք . ուստի և բնակիչք նր ստիպին այլաւս գնել երկվարս 'ի պէտս իւրեանց : Ունի և բլմ հանրային ջուրս անողջարարս . այլ և բովս պէտպէս մեծագոյն . բայց գրեթէ գլխովին լքեալ կան անգործ սակս անպիսանուէ :

Այս գլու հատորէն երիս և եթ իրքս ունի . իսկ աւանս և գետոյս բիւն : Բնակիչք նր իբր տա հորկեանդնոս են , յանգուդն , աշխատասեր , զոճար թամիտք , քաջայարմարք 'ի զինուորուէ , և անհնարին

րին նախանձայն զք ազատուէ իւրեանց : Գլխաւոր լեզու քառին՝ է լեզուն գերմանացւոց . զի ՚ի մեծ մասն քառին ՚ի նոյն բարբառ խօսին , այլ և յԷհա նուր ժողովա և ՚ի դիւանս , նաև հրովարտակք՝ և այլ դաստնական և օրինաց գրուածք՝ ՚ի նոյն բարբառ քրին : Ուրեք ուրեք խօսին և ՚ի լեզու իտալական . այլ եղծել բիւժ օտարախորթ բառից լիտանուծի , և յոռի արտասանուծի : Բիւժ ուրեք ևս խօսին ՚ի բարբառ նախնի հռովմայեցւոց : Իսկ լը կրօնից՝ երկու մասն բնակչաց նք կալվինական է , իսկ այլք ուղղափառ : ՚ի հն՝ էր մասն նախնի հռէտիոյ . որում ՚ի Ե գարուն տիրէին արևելեան գուծք , զոր կառավարէին ՚ի ձեռն դքսից . սպա էանց ՚ի ձեռս դերմանացւոց . որ և լը այն Ժմկս ՚ի բիւժ հնրկուծինս կի՞ ՚ի մանր իշխանուծիս բաժանել էր . որոց բաղմապատիկ ազատուիս շնորհեցին կայսերք գիր մանիոյ , մենդ թ փիդերիկոս կայսրն . ուստի և իւրաքանչիւրն գրեթէ էր ինքնիշխան արուծի . որ և մինչև յժիզ դարն կոչէին ազատ հնրկուիք : Ապա ՚ի ձեռն փոխադարձ դաշնակցուէց կացուցին երկս ինքնիշխան հնրկուծիս . որք կոչին Կրտսնեան , կի՞ Վէրին դաշնադարձի . Դաշնադարձի քանն ար . և Դաշնադարձի քանն դադարուից :

Արա՞ ՚ի 1471 մշանջնաւոր դաշամբ հանդերձ երգ մամբ միացան լը միմեանս . որով և երեքին միածնա մայն կացուցին զմի հնրկուի . որ կոչի Դաշնադարձի . երբեմն հանդերձ յուելուծուիս՝ Վէրին կաւփոյ , այլ և ճասարակուի կրտսնացոց , կի՞ Երեց դաշնադարձի կրտսնիոյ : Այս երեք հասարակուծիք բիւժ անդամ խնդրեցին մշանջնաւոր դաշամբ միա նալ լը ժիզ հնրկուիս զվիցցերաց , և լինել իբրև մի ՚ի նշէ . բայց նք ոչ առին յանձն , թերևս սակս կրօնի . զի առաւել է ՚ի նո թիւ կալվինականաց , ք ուղղափառաց , սակայն խոտուացան ունիլ զնք միշտ բարեկամս , և ՚ի Ժմկս հարկաւորուէ պաշտպան և ձեռնտու լինիլ նց : Յոյն սակս ոչ համարին ՚ի թիւն ժիզ քանթօնից , կի՞ հնրկուէց զվիցցերաց , այլ ՚ի թիւն պարզ դաշնակցաց . և վնկ պարզապէս անուանին դաշնակիցք : Իսկ կառավարուի նց է ապակապետական . վն զի քանն ՚ի ժիզ ամենից և ՚ի վեր ունին իրաւունս յԷհանուր ժողովս նց : Աշան կի՞ կնիք նց է վահան , որոյ կէսն սպիտակ է , և կէսն մթին մոխրագոյն :

Ի 1512 առին զՎալթէլինս ասացել ձորն , և զՔեօ

Վէննա, և զՊորթօ . և թէպէտ 'ի 1621 բնակիչք սո-
ցին քառաց օգնուի գաւէլ 'ի սպանիացւոց , և 'ի մի-
լանու , և լին յիշխանուէ նց , սակայն զինի 15 ամաց
անգրէն ի արու թ նց նուաճեցան : 'ի 1509 գնեցին
զՄայենֆելդ քղք հանդերձ շրջակայ սահմանաւ և
զիճակաւ իւրով . և 'ի 1536 զքղքական իրաւունս ,
կմ զիշխանուի Մալան և Եննիս վիճակաց , որք են
'ի քառի Լադիսնի :

Յայն սակս այս գաւառ լիհանրապէս բաժանի յե-
րիս հարկուիս . որք են Արիսնէան , կմ Աբրին Գաւ-
նայոսի . Գաւնայոսի քանն այ . և Գաւնայոսի քանն
Գապատրուէց . և 'ի Հոպապան նոյս . զորս յառաջիկայդ
ստորագրեսցուք :

Արիսնէան , կմ Աբրին Գաւնայոսի :

Ես գաւառ կրիսոնիոյ , կմ կրիճճիոնի . յարեւ-
ելից՝ ունի իւր սահման զգաւառն տանն այ , և
զաասն գաւառարուէց . 'ի հարաւոյ՝ զքեակէննա ,
և զիշխանուի միլանու , և զպէլինծօնա . յարեմալից՝
զուսի , և զպլենեան ձորն . իսկ 'ի հիւսիսոյ՝ զԿա-
րիս : Ունի լերինս մեծամեծս . յորս գլխաւոր է
Աչոսա լեառն յիշատակել 'ի նախնի մաաեհագրաց
յոււնաց և լատինացւոց , սրով այժմ՝ իմանան զԻբիս-
ֆալս . որ է իբրև մասն լերին սթյն կողդարտտսի .
զԼաւմանի . և զԼեռան սթյն Բեռնարտսի . յորմէ և Լա-
նեն երեք առաջք ունիս : Գլխաւոր տեղիք նք են

հետագայքդ :

Իւանց . լա՝ Իւանդիոս , կմ Աճոյիոս : Քզք փոքրիկ
և գլխաւոր տեղի այսր քառի , առ ոտս Մանպա- լե-
րին լի մէջ Ռեւոի , և Ալենէր վտակին՝ որ յայնկայս
քղքին խառնի 'ի ունո . բնակիչք նք կալլինական
են : Աստ գումարի յուրաքանչիւր երիս ամս լիհա-
նուր ժողովն կրիսոնացւոց . ուց և լամ քառական
ժողովք սորին գաւառի : 'ի 1484 գրեթէ առ հարկ
հրդեհակէզ եղև :

Տիսնիս . լա՝ Տիսնիսիոս , կմ Տիսնիսի : Աւան
առ ունիւր , յորում է մենաստան մեծ բենեգիկ
տեանց , որոյ հիւն արկաւ 'ի է դարուն . արքայն
նք անուանի իշխան կայսերական արուէ :

Թոսանա , կմ Թոսանա . 'ի հն՝ Գոսսիս . և Գոսսիս :
Աւան կալեալ զանուկն 'ի գուսկիացւոց , որք բնա-
կեցան սնդ : 'ի 1727 գրեթէ առ հարկ հրդեհ
եղև : Բ՛զմ վաճառք անցանեն լի այս տեղի :

ՇԲԼԻԿԵՆ : Աւան փոքրիկ սա ստորին ռէնօիւմ , յոտս
ՇԲԼԻԿԵՐԿԵՐԻ ԼԵՐԻՆ . որ 'ի լաւին բարբառ կոչի Սա-
տուրն թ Սաղթիկ , այլ և Գադաթ արջու . Է որ
է Քնիզ արքունի , որ հանէ յեղալիա :

Դաշնակցութի ասնն աս :

Ե յա գաւառ կոչի և Դաշնակցութի ախտանիս . յայս
Մանուէն անուանեղ լը ոմանց յեպտարանէն գոյի-
րայ հաետացւոց . որ է 'ի մէջ սահմանաց նր : Եւ
ունի իւր սահման յարեմաից՝ զքեալէննա և զԼե-
րոգրեալ գաշնակցութն . և զմասն ինչ Յ գառաւո-
րուեց . 'ի հիւսիսոյ՝ զնոյնն , և զգիրօլօ . յարեւելից՝
նոյնպէս զգիրօլօ . իսկ 'ի հարաւոյ՝ զպորմիս և զզ-
վալաեղինս ձորն : Ունի բնիւ լերինս , յորս գլխա-
սորքն են Լեւոն յուլիոսի . Բիբլիս , կի՞ Բիբլիսեան
լեւոն , որ միշտ ձիւնապատ է : Նշան կի՞ կնիք նր
է այժեամն ըստտուցեղ 'ի վր սպիտակ ենթակայի :

Իսկ գլխաւոր տեղիք նր են հետագայք :

Գոյիւս , կի՞ Գոսրիս հոեպոցայ . լը գերմ" Բուր . լը
գաղղ' Բոեբ : Եւ գլխաւոր քղք այսր քաւի , ուն և
համօրէն հարկուե կրիսոնացւոց , սա Փլէսուր վոտ-
կաւ . որ հոսեղ առ պարսպօք նր իւրև կիսաժամ
Յեռի 'ի քղքէ անտի . իստանի 'ի ռէնօ : Եւ թէպէտ
շէ այնչափ ինչ մեծ , այլ Կեղեցիկ է և բազմամարդ .
և բնակիչք նր կալվինական են . որք ունին 2 եկե-
ղեցիս , և 2 երևելի գալրոցս . և է բոլորովն ազատ
և ինքնիշխան . որ պահելով զազատութի իւր և զիշ-
խանութի , միացաւ ը հարկուե այսր քաւի . և զոյդ
Է նմ' ը այլոց երկուց հարկուեց կրիսոնացւոց :
Կրտավարութի նր է սահմանապահան . վր զի գրե-
խաւոր իշխանութի քղքին է 'ի ձեռս քղքացեաց ,
որք բաժանեղ են 'ի ե ցեղս կի՞ գասս . և կայուցաւ
նեն զմեծ ժողովն քղքին : 'ի սոյէ ամի ամի ընտրին
70 ատենակալք , որք կացուցանեն զմեծ գիւնանն .
և նք ընտրեն 20 ատենակալս , որք կացուցանեն
զփոքր գիւնանն . բաց 'ի սցէ ունի այլ ևս մասնաւոր
ատենաս , և ստորին գառաւորս , կարգեալ 'ի վր
այլ և այլ իրողութեց քղքին . ունի և իրաւունս
գրամս հատանելոյ : Ունի և եպտարան , որ կոչի
եպտութի գոյիրայ հաետացւոց . որոյ եպտն է իշխան
կայսերական տրուե . և է ը արքեպտաւ մեկոնցայ :
Բնակութի նր հանդերձ 6 կանոնիկոսօք , ուն և ա-

Թոռանիստ եկեղեցին՝ է արաքոյ քղթին 'ի բարձր վայրի սրտեալ շուրջանակի պարսպօք և գրամբք, որոյ շրջակայ վիճակն է թ իշխանութիւն ետիսին . որ ունի կալուածս և յայլ տեղիս կրիսոնիոյ, ունի և 'ի գերմանիս :

'ի 1541 եղև դաշնադրութի 'ի մէջ գաւառին տաննն նոյ, և ետիսին՝ որով պարտաւորեցան կանոնիկոսքն՝ որք ընտրեն ղեկսն, չառնել բնաւ ընտրուի ետիսի առանց խորհրդոյ և հաւանութե՛ն քառին տանն նոյ . և պարտաւորել ղեկսն, երգմամբ հաստատել, և անվրէպ պահել ղհետագայ վեց գլուխս բանկց : 'Ետիս՝ ղի ետիսն գոյիրայ մի արասցէ նոր կարգաւորութիս 'ի վնաս եղանակի կառավարութե, և աղաւառէ կրօնի և օրինաց քառին տանն նոյ : Ետիս՝ ղի հաստատեացէ զայն նամ, զոր ինչ սահմանագրեաց գաւառն 'ի բայակայութե պողոտի ետիսին : Ետիս՝ ղի առանց հաւանութե գաւառին, և ժողովոյն կանոնիկոսաց, մի ստարացուսէ ինչ 'ի կալուածոց ետիսութե : Չորիս՝ ղի աացէ համար քառին : Հինգերորդ՝ ղի զքղթական պաշտօնաւարութիս, որք կախել կան ղնմէ, աացէ այնոցիկ՝ որք են բուն բնակք քառին տանն նոյ : Վեցերորդ՝ մի կացուսցէ զոր փոխանորդ յետիսական պաշտաման իւրում՝ առանց հաւանութե ժողովոյն կանոնիկոսաց կի՞ քառին : Իսկ քառն խոստացաւ, ճանաչել և իւրեւել ղեկսն . հաստատել ղնա, և մուծանել յիշխանութի իւր . ձեւնաւ և պաշտպան լինել նի՞ իգէմ հակառակորդաց նորա . զբարին նր յաջացուցանել, և ղնմ վնաս հեւացուցանել 'ի նմէ : Ետիս նամ պահեցաւ անվրէպ մինչև յ1692 . բայց այնուհետև յընտրութե հետագայ ետիսց փոյթ ինչ ոչ կալան, 'ի պահել զայստսիկ պայմանագրութիս, չունելով ինչ երկիր ղի քառէ անախ . վն ղի կայսերք գերմանիոյ պաշտպան կացին ետիսին . Թեպէտ գաւառն տանն նոյ միշտ իգէմ բողոքեաց, պնդելով՝ 'ի սկզբանէ անախ ունել նի՞ իրաւունս 'ի վրայս ետիսութե . որում յնամ գլխաւածս միշտ ձեւնաւ և օգնական եղև :

Չիֆեր . Իկի . Թրիֆի . Ունիերլոյ : Են գլխաւոր գեօղք այսր քառի . որք յառաջագոյն ի իշխանութե ետիսին էին, այլ այժմ ոչ ևս :

Օրիֆի . Գալի . Պալի . Են երևելի գղեակք նր :

Էլիպիս : Գաւառ կի՞ հովիտ, որ սկսել յսկանց ինն կի՞ ենոս գետոյն՝ ձգի զօսփամբք նր ի երկայն իրև

Իբրև 15 ժամուց ճննդի . և բաժանի 'ի վերին և 'ի ստորին 'ի ձեռն կամրջին , որ կոչի բարձր կամուրջ . որ և է լէ մէջ Չինուակա , և Պրայիլ գիւղից : Վերին մասն նր ցրասային է և անբեր . զի բայ 'ի խոտոյ' գրեթէ այլ ինչ ոչ բերէ . ուստի և բնակիչք նր սփռին յայլ և այլ կողմանս եւրոպիոյ , Յանդ յիդալիա . 'ի գտանել զգարման կենաց : Իսկ ստորինն արգաւանդ է և բազմամարդ . բայց չիք 'ի նմ' քղք . այլ միայն գեողք . որոց տունք առ հնրկ քարաշէն են , և իբր 'ի բիւնս եռայարկք , յուրք ևս քառայարկք , ուստի և գեղեցիկ ևս երևին ք զբիւլ քղքս այլոց Յաց : Բնակիչք նր կալվինական են , և խոսին 'ի լեզու հռովմայեցւոց' զոր կոչեն լատին . իբր զի է եղծեչ լատին բարբառ , որ բիւլ մերձաւորութի ունի լէ իդալական բարբառոյ : Եւ քանզի նք գիւրաւ ուսանին զլատին , զիդալական , և զգաղղիական բարբառ , յայն սակս առաւել դիտնական են և քաջավարժ յուսմունս անթարանուէ , ք զայլ կրիստոնացիս . ուստի կառավարք համօրէն կալվինական մարանութե երկց դաշնակցուէց կրիստնիոյ 'ի սցէ կացուցանին : Բիւլ սեղիք սորին գաւառի էին լէ իշխանութե Ենիսին գոյերայ . և մասն ինչ ևս տանաւադրիոյ . այլ 'ի 1494 թօթափեցին զուժ նց , և այժմ են ազատ ինքնիշխան :

Ղաշնակցութի քանն դասաւորութեց .

Լյս քառ յերկց կողմանց , ք յարևելից յարևմտից և 'ի հարաւոյ' ունի իւր սահման զգաշնակցութի տանն այ . իսկ 'ի հիւսիսոյ' զգիրօլօ : Փոքր է ք զայլ երկու նախընթաց քառս և լեռնային և անբեր : Բնակիչք նր լւ մեծի մասին կալվինական , և կառավարութի նց սամիապետական : 'ի 1652 'ի ձեռն գրամոց ազատեցան յամ իշխանութեց , զոր 'ի վր նց անէր տունն ուսդրիոյ , ուստի այժմ և այս քառ ազաա է և ինքնիշխան հնրակուի . որոյ կնիք է վահան բաժանեչ 'ի շորս խորանս . որոյ առաջինն և չարորգն' են դեղին ոսկեգոյն . երկրն և երգն' կապուտակ . և 'ի ներքոյ մարդ վայրենի և յալթան գամ' , որ բարձեչ ունի զվահանն : Չունի իւր սեփական քղք կմ աւան , այլ միայն գեողս , բայց և այն սակաւ . զի բնակիչք նր լւ մեծի մասին ցրի՛ բնակին աստ և անդ , բաժանեչ յեթն մեծագոյն հա .

հարկուելն ըն եօթնեակ գլխաւոր ժողգւպեակն եկեղեցեաց . որոց գլուխ է Տառն , կմ Տառն անուանեալ վիճակն . առ գլխաւոր եկեղեցեաւ սորին վիճակի՝ է խորհրդարանն . ուր յիւրաքանչիւր երեսամս միանգամ դումարի ըհանուր ժողով քաւական .

անդ է և գիււսնն մատենից սորին հարակուէ :
Մայնեֆէլք , կմ Մեյնեֆէլք . ըս՝ Մայն քաւական , քաւական մայեայ . այլև Լաֆինաւ : Եւ ազատ քղք փոքր ը գերագոյն տրուէ երից դաշնակցուէց կրիսոնացւոց . զոր հնդձ շրջակայ վիճակաւ իւրով գնեցին 'ի 1509 'ի կոմսէն սուլչայ , յորում իւրաքանչիւր երկու ամս փոփոխակի կացուցանեն հիւպատոս . որոյ բնակութիւն է 'ի դղեակ քղքին , և գատէ զգոտստան արեան , և սահանջէ զտոյժա գրամոց , և զմարսս , ևն : Յետոյ 'ի 1537 գնեցին և զՄաւան , և զԼանն փոքրիկ վիճակս , որք են 'ի դաւառն մայէնֆէլտայ :

Հոլապակի Արիսոնացւոց :

Սրբա բնակին ը մէջ կրիսոնիոյ և իդալիոյ , և են որք իբրև 20000 , որք կարող են զէն վերացուցանել . Թող զտղայս , զճերս , և զկանայս , որք և բաժանին յերիս փոքրիկ քաւականս . որք կոչին Վալսէ և Էն . Պորթո . և Քեւալէննա : Այս երեք քաւականն անստանն սոււան 'ի կայսերէ ետնուէ գոյիրայ կրիսոնացւոց 'ի սպարգե . յորմէ յետայ զմասն ինչ առին տեարք գոտի . և զմասն ինչ իշխանք միլանու : Ապա 'ի 1486 , և 1487 . երեք գաշնակցուէք կրիսոնացւոց ձեռնամուխ եղին յինքեանս ընկրկել զնն . այլ գուքսն միլանու տուէ ինչ զմասն 'ի քաւականստի , ընդ նմին և 3050 վէնէտ՝ ոսկի , առ ժամն շատացան նովաւ : Այլ 'ի 1512 ետնն գոյիրայ և երեք գաշնակցուէք 'ի միասին պիղգմաւ անգրէն տիրեցին նոյ , ըն պայմանագրուէն՝ որ 'ի 1514 հաստատեցաւ 'ի մէջ ետնին , և երից գաշնակցուէց , չորեքին փոփոխակի կացուցանէին 'ի նն հիւպատոսս : Բայց քղի 'ի 1525 և զկնի՝ ետնն շեղև նոյ ձեռնատու 'ի պիղգմաւ ոչ զորօք , և ոչ գրամովք , բարձին 'ի նմեզայն իրաւունս . յորմէ 'ի 1530 ետնն ինքնին հրաժարեցաւ , բոլորովին ըն տրուէ նոյ Թոյլէլ զերես քաւական ևս . բայց ը սովին պայմանաւ , զի ամի ամի տացեն նմ 125 վէնէտ՝ ոսկի 'ի մարտից անտի բեա . վէննայ . յետոյ 'ի 1620 բնակիւք վալթէլինայ և

պօրմիօի՝ յարեան չէէմ կրխոննացւոց . և կոտորեի
 առհնրկ զկալվինականս , անդրէն 'ի ձեռս բերին
 զնորուի իւրեանց : Յորմէ անհնարին պոփոկուիք
 դրգուեցան , և բիւմ արեան ճապաղիք եղեն մինչև
 ցամս 1637 . յորում ամի կրխոննացիք անդրէն չէ տէ
 բուք իւրեանց նոճաճեցին զնս . չէ որով կան մնան
 մինչև ցոյսօր : Բայց բնակիչքն վալթէլինայ և քէս
 վէննայ՝ ունին մասնաւոր ազատուիս : զի ունին սե
 փահան օրէնս , և սահմանադրուածիս . ի որոց
 կանոնաւորին ատեանք նոցա և կառավարուածի :
 Այսպիսի ինչ յաղագս պէտիս անցից երից գաւա
 ռացս . արդ՝ ստորագրեցուք զԵւրոպանչիւրս առան
 ձինն :

Վալթէլիա . ի գերմ՝ վէլտլին . լտ՝ Վալտիո րէլլի
 նա . ք Տեղինեան ձոր : Է չէ մէջ Կալուին տանն այ ,
 կոմսուէ պօրմիօի , և վէնէտիկան սահմանաց , և
 միլանու , առ ստորոտով ալբիոյ լերանց : Էրկայնուի
 նր է իբրև 8 մղոն . իակ լայնուին ուրեք 2 կմ 3 . և
 ուրեք մինչև ց 5 սոռգեի յատուա գետոյն , որ հոսի
 չէ մէջ նր . և յինքն ընկալեի զայլ ամ վասկս այսր
 ձորոյ , գնայ մասնէ 'ի դամօ լիւնն : Այս ձոր ար
 գաւանդ է . բերէ արմտիս առատ , և պտուղս . մենդ
 շաղանակ , և գինի ազնիւ կարմիր , զօրեղ և ատորժա
 կան , զոր մարթ է պահել մինչև ց 100 ամս . զի որ
 չափ հին է , այնչափ առաւել համեզ է և առողջա
 բար . այլ առ սակաւ սոկաւ կորուսանէ զկարմրու
 թին , և փոխի 'ի գեղնագոյն . և այն է գլխաւոր
 վաճառ նր : Չիք 'ի նմ քղք , այլ միայն աւանք և
 քեղօղք : Բնակիչք նր խօսին 'ի բարբառ իդալական ,
 եղծեի և յուրի . ի կրօնից առհնրկ ուղղափառ են .
 յաջագոյն գտանէին 'ի նմ և կալվինականք , այլ 'ի
 1620 յսպաստամբիլն սց 'ի կրխոննացւոց , առհնրկ
 կոտորեցին զնս : Այս Կալու բաժանի յերիս մա
 սուենս , 'ի վերին , 'ի միջին , և 'ի ստորին . և գլխա
 ւոր տեղիք նր են հեաագայք :

Թիւրան , կմ Թիւրանօ : Գլխաւոր աւան վերին մա
 սին , մեծ , բարեչէն , և բաղմամարդ , տա ստուա գե
 տով . յաջագոյն պարսպապատ էր և բերդաւոր , այլ
 այժմ ոչ ևս : Հանդէս նր յայնկոյս գետոյն է հոյա
 կապ եկեղեցի յանուն Էծամօրն , բովանդակ 'ի սպի
 աակ մարմարիոն քարանց , գեղեցիկ և մեծագանձ .
 յոր յաճախեն բարեսրայտ ուխտաւորք 'ի յարգուի
 հրաչագործ պատկերի Էծամօր կուսին :

Սնարօ , կմ Սնարիօ : Գլխաւոր աւան միջին մասին ,
 ունչ

ուր և համօրէն զՍուրբ Կաթողիկոսի և Սուրբ Կաթողիկոսի ան Մալէր վատկաւ, որ յայնկոյս աւանին մասնէ յատուս գեան: Անդ է բնակուել կուսակալ հիւսպատոսին:

Մօրպէնէ: Գլխաւոր աւան սասրին մասին. մեծ և բազմամարդ առ Պիպոն վատկաւ, որ փոքր մի հեռի 'ի քղքէ սասի մասնէ յատուս գեան: Այս աւան յիջադոյն պարսպապատ էր. ունէր և դղեակ ա մուր. զորս 'ի 1521 առհնրի քանդեցին:

Տէլէպիօ. լա" Ալլէպիոս. Փօնի. լա" Պոնիոս. Գրա հոնա: Ին գլխաւոր աւանք այսր գաւառի:

Պօրթօ: Գաւառ չ մէջ զՍուրբ Կաթողիկոսի, գիրօլօյի, վալթէլինայ, և հին վէնէտիկան փրուէ. պատեւ շուրջանակի բարձրաբերձ և ապառաժուալ լերամբք, որք գրեթէ միշտ ծածկեւէ են ձեամբք. նաև 'ի մէջն լեռնային է յոյժ, ուստի և ցուրա և սնբեր. չիք 'ի նմ' այգի. և ծառք պողպեքք սակաւք, ուր և արմարք. այլ ունի պատուական արօտս անասնոց, և անասուն բզմ. մենդ արջառ, ոչխար, և այծ. յորոց գործեն պանիր և կոգի պատուական. ունի և բովս երկաթոյ. ուր և մեղր արհիւն և առատ: Թիւն բնակչաց նր է իբրև 14000. որք առհնրի ուղ զտփառ են. և ունի իւր համանուն աւան մեծ և բարեշէն. առ Ֆրափօլք վատկաւ 'ի նախնու մն Սո զախա ասացեւ. որ մերձ 'ի քղք անդր մասնէ յատուս գեան:

Բեալէննա: Ի չ մէջ վերին դաշնակցութե կրիսոն նացոց, և զՍուրբ Կաթողիկոսի, և վալթէլինայ, և սահմանացն գօթօի: Երկայնուել նր է իբրև 7 ժա մուց ճննէ. իսկ լայնուելն 6. պատեւ շուրջանակի բարձր և սեպացեւ լերամբք: Տօթն յամարան երբեմն սաստիկ է անդ, և օգն զնասակար, յորժամ հողմն հարաւային շնեւ չ գօթօեան լիճն, բերէ անդ ժանտ շոգիս: Գլխաւոր բերք նր են պէսպէս ոլտուղք, մենդ շադանակ, և գինի արհիւն, և մե սաքս. բերէ և ցորեան այլ սակաւ, որ չէ բաւա կան բնակչաց նր, որք առհնրի սղղափառ են: Ունի երկու գետս, որք են Մայրա, կմ Մերա. և Լիբա. իսկ գլխաւոր տեղի նր է:

Բեալէննա. Ի գերմ" Գլէլէն, կմ Գլայլէն: Աւան առ մայրա գետով. մեծ և գեղեցիկ և բարեշէն. ունէր շուրջանակի ամուր պարիսպս, և աշտարակս, այլ և երկու դղեակս. զորս 'ի 1526 իսպառ քանդեցին կրիստոնացիք: Բաց 'ի գլխաւոր եկեղեցւոյն քիջ լաւրեանախոնի, 'ի ներքս և արտաքս ունի 5 եկեղեցիս:

ցիս , և 2 մեհաստանս , մի արանց՝ և միւս ևս կա-
նանց : Ի ստորին կողմանս շերանց՝ որք են շուրջ
զսովին աւանաւ , ուր և յայլ անդիս քառին , գտա-
նին բնական քարանձաւք , յորս բնակիչք տեղւոյն
պահեն զպատուականագոյն գինի իւրեանց :

Չոր սէյն յախթայ : Ալիճակ փոքրիկ ՚ի սմին քառի ,
անբեր և աղքատ , զի շունի ոչ գինի , ոչ պատուղո
ծառոց , և ոչ արմատիս . վնյ բնակիչք նր հազիւ կա-
րեն հայթհայթեւ զգարման կենաց ՚ի ձեռն անաս-
նոց . զի գրեթէ առհարկ անասնագարման են : Բայց
այսպիսի դառն սղքատուի նց լի իրաց ինչ թեթեւա-
նայ ՚ի ձեռն բաղմապատիկ սզատուեց . զի բնմ ա-
զատուիս ընկալան յիշխանացն միլանու . զորս յետոյ
հաստատեցին , և նորս ևս ՚ի վր յաւելին կրիսոնա-
ցիք սակս հաւատարմուե նց ՚ի Ժմկս խաթուլթեց՝
որք յամէ անտի 1620 ձգեցան մինչև ց 1639 : Ուստի
և ունին սք մասնաւոր քղքական օրենս այլադանս
յօրինաց այլոց տեղեաց քեովէննայի , և սեփական
ատեան , և ասենակալս : Յայս ձոր է լեառն մի ան-
ուննեւ Շֆլիէրպերի . ուր բազմաց՝ որք է այն ճա-
նապարհորդեն , գիւղի պտոյս գլխոյ :

Բիւտի , կի՛ Բիւտաւ . լի գերմ՝ Բւլեր : Էր աւան
գեղեցիկ և բարեշին յայնկոյս մայրա գետոյն , միով
ծամու հեռի ՚ի քեովէննա աւանէն . ունեք գեղե-
ցիկ եկեղեցիք , և այլ շինուածս վայելուչս , և քա-
րաշէն կամուրջ ՚ի վր մայրա գետոյն . ՚ի հարաւոյ
պատէր զնովա Տնպոս Վառն . յորոյ ՚ի ներքին կող-
մանս լի են նեխեւ ջուրք : Ի սոյն լեռնէ ՚ի 1618 ՚ի
սեպտ՝ 4 յանկարծուստ իմն հատաւ հատուած մի
մեծ անհնարին շառաչմամբ . և գահավէժ անկեւ ,
ծածկեաց առհարկ ոչ միայն զաւանն , սյլ և զՇի-
լան մերձակայ գետն . յորում էին 75 տունք . մինչև
չմնալ բնաւ և ոչ իսկ հետոց նորս . յորմէ ՚ի շի-
լանս մեռան 930 ոգիք . իսկ ՚ի թիւուր 1500 . երեք
արք և եթ ապրեցան , որք յայնժամ դառն սրտաբոյ
աւանին : Եւ աւերակք լերինն առ Ժմկ մի իսպա-
նեցին զընթացս մայրա գետոյն . մինչև ջուրոյ նր
բացեւ ուրեք ճննգհ , սկսան վերստին հասիլ :

Վալէսիա :

Վալէսիա . ի գերս" Վալլիս , կժ Վալլիսերանս . ի
 «գաղղ» Վալէ : Էր հարկուի ինքնիշխան . որ բա-
 ժանի 'ի վերին և 'ի ստորին . և ունի սահմանակից 'ի
 հիւսիսոյ՝ զպէննա , և զլիճն ճինէվալյի . յարևմտից՝
 զսավոյա . 'ի հարաւոյ՝ զբիէմօնթէ և զմիլան . իսկ
 յարևելից՝ զիբիսոնիա : Եւ է իբր լարձակ իմն ձոր
 պատեղ շուրջանակի բարձրաբերձ լեռամբք . երկայ-
 նուի նր է իբրև 34 ժամուց ճննչհ . իսկ լայնուին
 իբրև 10 . օր նր ջերմոյին է , և երկիրն արգաւանդ
 և բերրի . բերէ ցորեան , հաճար , և այլ արմտիս
 առատ . որոց հունձք սկսանին յամսեան մայիսի , և
 աւարտին 'ի հոկտեմբերի . վս զի 'ի տափարակ և
 'ի զնտադոյն աեղիս վաղադոյն հնինն սակս առա-
 ւելուէ ջերմուէ , ք 'ի վր լեռանց . բերէ և գինի
 պատուական ծաղկահոս , և աղղի աղղի պտուղս .
 ուղ և քրքում , որ է զաֆրան . ունի և անասունս
 բիմս ընտանիս և վայրենիս : Ասի , թէ գտանին
 անդ և բովք արծաթոյ , պղնձոյ , և կապարի , բայց
 թուի , թէ չեն այնչափ առատաբեր . յայն սակս
 լքեղ կան անգործ : Իւնի և ածուխ հանքային , և
 հանքային ջուրս , և ջերմուկս : Գլխաւոր գետ նր
 է ոտանօ գետն մեծ , որ ելանէ 'ի Փորթա լեռնէն
 'ի լեռնացեղ սառուցից անտի . և անցեղ լէ մէջ գա-
 ւառին , զնայ մտանէ 'ի լիճն ճինէվալյի :

Մի միայն քղք ունի . այլ աւանս և գեղոս բիմ ,
 զի է բազմամարդ . բնակիչք նր ի կրօնից ուղղա-
 փառ են , իսկ լը բարուց քաջասիրտք , ծանրաբա-
 րոյք , աշխատասէրք , եռանդնոտք , և նախանձայոյդ
 ազատուէ . որք ոչ հանդուրժեն լինել լը օտար սե-
 բուք : Մք իմ ոմանց պատմագրաց՝ նոր և անլուր
 սովորուի իմն ունին , 'ի զսպել զյանդգնուի և զս-
 պարասանութի իշխանաց իւրեանց . վս զի եթէ ոք
 իշխանաց անտի զրկանս ինչ և անիրաւուիս արատ-
 ջէ ոմանց 'ի ժողովրդենէ , առնուն նք բուն մի ծու-
 ռոյ հանդերձ արմատովն . և 'ի գագաթ նր ձեա-
 ցուցանեն ուրուական գլուխ մարդոյ տգեղ և այլա-
 տարազ . և ամբն՝ որք կրեղ են զրկանս ինչ , մի մի
 բևեռս հարկանեն յուրուական գլուխ անդր . և
 տարեղ անկեն զայն առ գրան իշխանին՝ յորմէ անի-
 րաւեցանն . 'ի նախատինս նր . ապա իբր վատա-
 նուն

նուն արտորի 'ի վիճակէ իւրմէ , և ինչք նր յարքու
 նիս գնան : Ասի , թէ սակաւք դասնին 'ի վալէ-
 սիա , որք չունիցին ուսոյց 'ի սարանոցս , և որք
 ժամանեոցեն 'ի միջտիան իմն հասակ . ուստի և իբր
 'ի բիւն շնչարգելութե մեռանին . զոր ասեն , սաա-
 ճառիլ 'ի տղամային աւսուցում և 'ի ծանր ջուրց նր ,
 որք առ սակաւ սակաւ թողուն 'ի միանունս մարմնոյ
 թանձր և անմաքուր մասունս : Բայց են ոմանք
 որք ասեն , թէ գտանին անդ բիւն 'ի խորին ծե-
 բուն հասել , մինչև ցհարիւրեմեան հասակ . 'ի
 մասին ինչ այսր քառի 'ի խորն 'ի լեզու գերմանաց-
 ւոց . և 'ի մասին ինչ գաղղիարէն . բայց լէ համ-
 րէն քառն' և մենդ 'ի գլխաւոր աւանս' փոյթ մեծ
 ունին ուսանիլ զլեզուն գերմանացւոց , գաղղիաց-
 ւոց , իգալացւոց , այլ և զլատին բարբառ . ուր զի
 կարասցեն համարձակ առևտրուիս առնել լէ բնա-
 կիցս պէճնայի , ուսիս , սաւօյայ , փիէմնիթեայ , և
 միլանու . իւրեանց սահմանակից քաւաց :

Նախիկ բնակիչք սորին քառի Էդուրպոյի վիբե-
 բոյի . Սեբաստոյի , և Վերաբոյի . և 'ի միջին Ժմիս
 կոչեցաւ քառս այս վալէսիա . որ և մասն ստորին
 բուրգանտիս , կի՞ սուրկայնայ , լէ սրու՞ 'ի 1032 առ
 արուք ք կողադոսիկայսերէանց լէ իշխանութե գեր-
 մանացւոց արուք : Ապա 'ի 1035 նա ինքն կողա-
 դոս կայսրն զստորին վալէսիայն ետ արեւելքոսի
 կամսին սաւօյայ , վն ձեռնտու լինելոյ նի՞ 'ի սպարզ-
 մունս . բայց բնակիչք վերին վալէսիոյ պինդ կա-
 լան զազատուի իւրեանց , ամ՞ զօրութե պիտգմելով
 լէ գէմհիպորգաց : Յետոյ 'ի 1475 ետրոն ճինելուայի
 եղբայր գքսին սաւօյայ առաքեաց 'ի վերին վալէսիա
 1800 զօրս , որք կէս մի սաւօյայցիք էին , և կէս
 մի 'ի ստորին վալէսիոյ . այլ բնակիչք վերին վալէ-
 սիոյ օգնութե 3000 արանց առաքելոց 'ի պէճնայէ ,
 'ի Ֆրիպուրկայ , և 'ի սոլորնօէ , հարին զօրս ետրոն ,
 և տիրեցին փոքուն վալէսիոյ . և այնուհետև միաց
 'ի ներքոյ իշխանութե նց , և բնակիչք նր կոչին հպա-
 տակք վերին վալէսիոյ : 'ի եմին սմի արարին մշան
 ջենաւոր գաշնակցութե լէ պէճնայի . և 'ի 1529 լէ
 համօրէն հնրակուէ զվիցցերաց . և 'ի 1533 մասնա-
 ւորասէս լէ եօթն ուղղափառ հնրակուէց : Արդ
 հնրակուին վերին վալէսիոյ՝ բաժանի յեօթն վիճակս
 կի՞ ժղիգս . յորոց վեցն ունէր զկիւվարութե աամկա-
 պեաական , իսկ եօթնեքոն , քո՞ սիոն քաղաքն՝ էր
 ազնուապետական : Եւ իւրաքանչիւր վիճակ առա-
 քէր

քէր հըրձոկս յԵհանուր ժողովն այսր հըրկուէ , ան
ուճանե՛լ ֆւռական ժողով . որ յամին երկիցս գու-
մարէր 'ի մայորիա գղեակն օրոնի . որում նախա-
գահ բազմէր ետան սիսնի : Իսկ կնիք կմ նշան այսր
հըրակուէ՛ է վահան բաժանե՛լ 'ի ձեռն գծի շէր-
կայն ձգեւոյ . յորում է ասող մի երկմասնեան .
մին կարմիր , իսկ միւսն սպիտակ . և երկոքին
ևս զարդարե՛լ երեք երեք ասակղօք : Այս ֆւռ բա-
ժանի 'ի վերին , և 'ի ստորին . որ յայսմ մերում
վերջին Ժմկի միացուցաւ Շ գաղղիոյ :

Գլխաւոր փեղիք վերին Ալէսիոյ :

Աին . լո" Սէրանուս . Շ գերմ" Սիբիէն : Գլխաւոր
քղք համօրէ՛ծ վալէսիոյ՝ առ Սին դեաով . ոչ
կարի ինչ հեռի 'ի սօտանօէ . բարեշէն , բաղմամարդ ,
և ետսանիստ . որոյ ետսարանն հին է ք զայլ ամ
ետսարանս զվիցցերիոյ . ետս նր անուճանի կոմս , և
գլխաւոր նախարար վալէսիոյ . զոր ընտրէ ուխտն
աթոռանիսա եկեղեցւոյն , որք 24 են թուճով . և
դեոսպանք 7 վիճակաց վերին վալէսիոյ . և 'ի մաս-
նաւոր հանդէսս ինչ կրեն առաջն նր մերկ սուսեր ,
'ի նշան քղքական իշխանուճե՛ն նր . որ և ունի իւր
մասնաւոր զինակիր . այլ և սեփական կալուճածս 'ի
ստորին վալէսիա : Այս քղք բաց 'ի մայր եկե-
ղեցւոյն՝ ունի այլ ևս 6 եկեղեցիս , և քանի մի մե-
նաստանս . և 3 գղեակս կմ ամրոցս՝ մի քան զմի
բարձր , այլ անլուք . յորոց 'ի մին՝ որ է 'ի ստորա-
գոյն վայրի , անուճանեալ Մայրիա , է բնակարան
ետսին . ուր և գումարի ֆւռական ժողովն ստրին
ֆւռի : Գտանին 'ի նմ և շինուճաք ինչ մնացե՛լք 'ի
նախնի հռովմայեցւոց . յորմէ յայտ է , թէ հին է
քղքս այս . որ երկիցս հրկէղ եղև . և 'ի 1475 պա-
շարեցաւ 'ի ճինէվաացւոց , և 'ի սալոյացւոց . այլ
վանեցան անախ , հարուճածս մեծամեծս ընկալի՛լ 'ի
վալէսիացւոց :

Ալէրեն . Պրայի , կմ Պրիի . Վիտի . Րուէն , կմ Րու-
բն . Լէտ , կմ Լայտ . Սիդերո . Կրոպեց : Են գլխա-
ւոր աւանք վերին վալէսիոյ :

Գլխաւոր պեղիք սարդին Ալէսիոյ :

Ան Մաւրիոյ : որ թարգմանի Սբ մաւրիտիոս . լու՛
 Մաւրիոյ : Աւան դեղեցիկ և բարեշէն , ը մէջ
 երկուց շէրանց առ ուսումնո գետով . յորոյ վր ու
 նի կամուրջ քարաշէն , և յարևմտեան կողմն նրառ
 ոտս բարձր շէրին՝ դղեակ ամուր , յորում բնակի
 կուսակալ իշխանն . իսկ յարևելեան կողմն կամրջին
 աշտարակ ամուր : Այս աւան ունի զանունն ՚ի
 հաչակաւոր մենաստանէն կրօնաւորաց կարգին սբյն
 օգոստինոսի . ուր սպահել կային նշխարք սբյն մաւ
 րիտիոսի , ը որս և գեղարդ նր . զսրմէ ասեն , թէ
 է այն որով խոցեցաւ կողն փրկչին մերոյ . զոր ք
 ը իդողիոս արքայն բուրգսնդիոյ . ետ ձ ենրիկսսի
 կայսեր գերմանիոյ . որ և է մի ՚ի նշանակաց անաի
 դերմանացւոց արուէ : Թէպէտ բզմք ոչ հաւանին ,
 թէ իցէ այն դեղարդն՝ որով խոցեցաւ կողն քնի ան
 մերոյ : Այս աւան ը կարծեաց ոմանց Յուգրաց՝ է
 Ալֆանուս նախնի քղքն , ուր ասի թէ յաւարտ ք
 դարուն նահատակեցաւ թեքաեան գունդ մի զորաց
 քրիստոնէից : Եւ ևս ը ոմանց՝ կարծի լինել Տու
 նարա քղքն վաղնջական . զոր յիշատակէ անասնինոս
 ՚ի ճնշհորդուիս :

Մերձ յայս տեղի է Եննէ , կի՛ Էրինա գետուն . որ և
 իւրիանա . առ որով ասեն , թէ էր Էրֆանուս , կի՛
 Էրֆանա քաղաքն , ուր ՚ի 509 կի՛ 517 եղև ժողով ի
 եւկասաց . որ և ծածկեցաւ ը փլատակաւ մօտակայ
 շէրին , ը օրինակի նախայնչատակել Քիւրի քղքին :
 Մարիինա , և Մարիինի . լու՛ Մարիինիտոս : Աւան
 կրկնապատիկ . որոյ մի կողմն կողի քղք . իսկ միւսն
 աւան . իբրև կէս մղանաւ սարակայ ՚ի միմեանց .
 ունելով ՚ի միջի անջրայետ զ՚Իրանն գետն . որ իջանէ
 ՚ի շէրնէն սբյն բեռնարդոսի . և միով ժամու հեռի
 ՚ի քղքէ ասաի՝ մոսանէ ՚ի ուսանո : Երջակայ վիճակ
 սր բերէ երկու աղգս գինւոյ գերապանց և անուանի
 յեւրոպիա : Թո՛ւի , թէ աստ էր Օրթոգոստոս քղքն .
 զսր յիշատակէ յուրիոս կայսրն . զոր և կոչէ Գեղ
 Վերայրացոյ , որք էին ժողգ հոովմայ : Եւ ևս ը ոմանց՝
 աստ զառաջինն հիմնեցաւ ենյարանն սիսնի : ՚ի
 1596 իբրև 500 տունք տասյալեցան աստ յողովմանէ
 ջուրց ուսանո գետոյն :

Մօնիէ , կի՛ Մօնիայ . լու՛ Մօնիէուս : Աւան առ
 ոսս

ոտս լերին . որ յնշագոյն էր առ Վիկէ գետով . այլ
քղի բաժանգամ յաճեւ ջուրց գետոյն՝ մտանէր յա-
ւանն , և բաժմ շնասս գործէր 'ի նմ' , նմին իրի յայլ
կողմն գարձուցին զընթացս նր . ուստի այժմ փոքր
մի 'ի բացեալ է 'ի գետոյ անախ :

Մուկուսիա . Ը գերմ՝ Միւկուսէն : Աղատ քղք
առ սահմանօք սուկուկովայ և վերին ալսացիոյ առ
իւ գետով . 'ի զոճարձալի և յարգաւանդ գաշտա-
վայրի : Բնակիչք նր՝ որք են իբրև 4000 , առ հարկ
կալվինական են . յորոց կէս մի 'ի բարբառ գերմա-
նացւոց կասարեն զսիւծային սլաշտամունս 'ի ժողովք
գապետական եկեղեցւոջ սքնն սանփաննոսի , և կէս
մի գաղղկարէն յեկեղեցւոջն , որ յնշագոյն էր միան-
ձանց կարգին սքնն Ֆրանչիսկոսի : Այս քղք՝ որ
յնշագոյն էր լէ ետիսաւ շքաասպուրկայ մայրաքա-
ղաքի ալսացիոյ , 'ի ժոք գարուն արարաւ ազատ քղք
կայսերական 'ի ձ ըրիգողիսս կայսերէ . որ ետ նմ
և այլ ազատուիս . զորս յետադայ կայսերք հաստա-
ւեցին և աճեցուցին . մասնաւորապէս ագողիոս
արքայն գերմանիոյ . և զ կարողոս կայսրն : 'ի 1515
արար մշանջենաւոր գաշնագրուի լէ ժոք հարկուեց
զվիցցերաց . և թէպէս 'ի 1586 ուղղափառ հարկուեքն
զվիցցերաց հրաժարեցան 'ի գաշնագրուէ անախ ,
սակս վիշտս հասուցանելոյ բնակչոց սր գետալանադ
իւրեանց 'ի ժմիս քղքական խռովութեն , սակայն
հարկուեքն հերետիկոսաց պահեցին զգաշն զայն , և
միաբան եղեն լէ նմ մինչև ցվերջին ժմիս : Յայն սակս
և այս քղք էր մի 'ի հարկուեց , որք անունանին ըն-
կերակիցք լէ հանուր գաշնակցութեն կմ միաբանուե
զվիցցերաց . թէպէս 'ի ժմկէ անախ՝ յորում հարկուեք
ուղղափառաց հրաժարեցան 'ի գաշնագրուէ նր . չու-
նէր իրաւունս և սեղի յլէ հանուր ժողովօ զվիցցե-
րաց : Առաւմարուի քղքիս էր սգնունապետական .
և կնիք նր կարմիր անիւ աղօրեաց 'ի վր սպիտակ
ենթակայի :

Առաստիալաւի 'Արտաւարկայ :

Արտի և իւխանաւի նէֆլաիւէլայ , և վալանիկնայ . այլ
և 'Արտի-Վան իսասիալաւի . յարևելից՝ ունի իւր
սահման զետիսուիւն պասիլիոյ , և զմասն ինչ պէա-
նայի , և զլիճն պիւէլայ . յարևմտից և 'ի հիւսիսոյ՝
զպուրկոյն գաղղկացւոց . իսկ 'ի հարաւոյ՝ զմասն ինչ
Ֆրիւ

Ֆրիպուրկայ դառին, և պէննայի, և զլիճն նէ Ֆլա
 թէլայ : Երկայնուի նր է իբրև 10 կմ 11 ժամուց
 ճիւղհ : Իսկ լայնուին 4 կմ 5 և եթ : Օդ նր է բա
 րեխառն, և երկիրն լծ առաւել մասին լեռնային և
 անբեր : յայն սակս բնակիչք տեղեացն այնոցիկ ա
 ռաւելլապէս արձեւասից միա դնեն, ք մշակութե
 երկրի : Բայց ուրեք ուրեք ունի բլուրս, հովիտս,
 և անդաստանս արդասաւորս, որք բերեն գինի աղ
 նիւ, կարմիր և սպիտակ : այլ և աղքս աղքս պողոց
 և կանեփ և վուշ : Լեն : Ունի 3 քղքս : և 63 դեօղս
 և այլ և ս բիւ մտունս ցրիւ աստ և անդ : բնակիչք
 նր լծ բարուց եռանդնոտ են, աշաղուրջ, փոյթ,
 աշխատասէր, ճարտար, կարի փառասէր և տմբար
 տաւան : Իսկ լծ կրօնից մեծ մասն նց կառվինական
 է, և սակաւ ոմանք ուղղափառք :

Այս քառ ՚ինախնոււմն էր մասն ստորին բուրգոն
 դիոյ, կմ պուրկոյնայ : և զոյդ լէ նմ ՚ի 1032 էանց
 լէ իշխանութե գերմանացւոց արուէ : ապա զկնի ախ
 բէլոյնմ բիւմյ՝ պիօքմու, և ՚ի ձեռն ինամուէց, հասկ
 յետոյ ՚ի 1707 ՚ի միասին լէ վալանկիինայ տոճաւ ւ
 փիդէրիկոսի արքային պրուշի : որ և աւժամայն
 կալաւ զարուի նր, հաստասեւելով զմմ ալաւուժիս
 նր՝ և զգաշնագրուին՝ զոր յնջագոյն արարիլ էր լէ
 պէննայ քղքին, լուէննայի, Ֆրիպուրկայ, և սո
 լորնիօի : որ և յայն սակս անձանի բնկէ բակից հար
 կուէ զվիցեբաց : Եւ ՚ի գաշնագրուէ ութրեքայ,
 որ եղև ՚ի 1713 ՚ի մեջ գաղղիացւոց, և թէրին պրուշի
 վերատին հաստատեցաւ արուի նր ՚ի վր սր : Վայ
 թէրն պրուշի ՚ի վերտառուէ իւրում կոչի և Գեբա
 գոյն իշխան նեպոլոնայ, կմ՝ Նեֆլաթէլայ, և վալանկինայ,
 և կացուցանէր անդ արքունի կաւտակալ իշխան : որ
 նախագահ բաղմէր ՚ի դերագոյն ժողովն այսր հորա
 կուէ : զոր և նա ինքն գումարէր լծ հաճոյից իւրոց,
 և հաւաքէր զքունէս ժողովականայ : և յորժամքունէքն
 հաւատար էին, ինքն բացորոշէր զիրողուին : Այլ
 այժմ միացուցաւ և սա լէ դաղղիոյ : որոյ գլխաւոր
 անդիք են հետագայք :

Նեոպուրի . լծ գերմ . Նայնպուրի . այլ և Նեֆլաթէլ, կմ
 Նայպլաթէլ . ՚ի հն . Նեօօօմա . և Նալիգասիբոմ . այլ և
 Նեոպուրիոմ : Գլխաւոր քղք սոյս հորկուէ կմ դա
 ւառի, որ ՚ինմէ ունի զանուն : կառուցեալ ՚ի վր
 երկուց բլրոց, առ համանուն լճիւ : և է մեծաշէն
 և դեղեցիկ : ունի 4 մեծամեծ փողոցս : և 2 եկե
 ղեցիս եւթ : և ՚ի շրջակայս ի ս պարսէ զս վայելուչս
 և

և գեօղս րիմն : Բնակիչք նր կալվինական են . և կառավարուին արևոճօպետական էր . ունէր երկու գլխաւոր ժողովս , յորոց մին կոչուր մեծ , զոր կաջուցանէին 40 նախարարք . իսկ երկզն փոքր , զոր կայուցանէին 24 նախարարք . և 'ի ձեռս նց էր կառավարուի գլխաւոր իրողուէց քղքին : Պատմի , թէ քղքս այս հիմնեցաւ 'ի 1034 'ի կառադոս կայսերէ . որ չորիցս մեծամեծ ինասս կրեաց 'ի հրկիզուէց . և երկու անգամ 'ի հեղեղէ ջուրց 'ի բարձրանալ ջրոյն Սէյան գետոյն : 'ի 1406 արար մշտնջենաւոր դաշնադրութի լէ սէռնա քղքին , որ յետոյ երիցս անգամ հաստատեցաւ : Եւ էր սզատ յնմ հարկաց , և 'ի տասանորդաց , գողով լէ գերագոյն արուք թգրին պրուչ :

Լանփերն . Ըն գերմ" Լանփերն : Էքազաք փոքրիկ 'ի տեղուշն , ուր Յիւ , և թիւէ գեոքն մտանեն 'ի Պիէլեան լիճն :

Պոպրի , կմ Պոպրի : Քղք փոքր 'ի բարձրաւանդակ վայրի , առ Բիւէ գետով . որ բաժանէ զնա յերկու մասուենս , որք կամրջաւ հաղորդին լէ միմեանս : 'ի սմին քաւի 'ի միումն 'ի ժայռից Իւրայ լերին , որ է 'ի գլխաւոր լերանց զվիցցէրիոյ , նախնի հեթանոսք կանօք հասեչ շինեցին տաճար կուոց . ուր 'ի ձեռն հարցուկ կանանց իւրգ հարցանէին ցհերմէս չթծն :

Այս տաճար կայ մնայ մինչև ցայսօր , այլ կարի դժուճարին է գնալ անդր . դուռն նր' և բովանդակ ճակատն՝ գեղեցիկ է , և մեծաշէն . ունի 'ի վերուստ կամար հասեչ 'ի միաստանի լեռնացեչ ժայռի անդ , որ գրեթէ անմատչելի է :

Վալանիին , կմ Վալանիին , և կմ Վալանիին : Է մասնաւոր կամար , կմ վիճակ . որ 'ի միասին լէ նէսպուր կայ էանց լէ գերագոյն արուք թգրին պրուչ . իսկ այժմ լէ արուք գաղղիացուոց է . սրոյ գլխաւոր տեղիք են Վալանիին , կմ Վալանիին . Կօգրանէ . Տօգրեան . Կրանք սասանիէր :

Քաղաք , և հասարակուի Ղինէվայի :

Ղինէվա . Ըս" Ճինէվա . Ը գերմ" Ճինգ . Ը գաղ" Ճինէլէ . 'ի հն" կեպեննա . Չենպիոս . Իսնպոս . և Եանվա : Է քղք ամուր , մեծ , հոյակապ , գեղեցիկ , մարդաշատ , և բաղմալստաւ . կառուցեչ 'ի բարձր և 'ի զսճարճալի վայրի . ուր ուստանօ ելանէ 'ի

'ի ԼՃԷՆ ճինէվալյի, և յինքն ընկալել զԼՃԷՆ վտակ,
բաժանէ զՔղքն յերիս մասունս . որք կցորդին Է
միմեանս 'ի ձեռն չորից հոյակապ կամրջաց : Օգ նր
բարի է և առողջարար . դիրքն գեղեցիկ և քաջայար-
մար վճռկանու է սակս մերձ գոլոյ նր ոտանոթ . որով
գիւրին լինի փոխադրուի վաճառաց . նորին ազա-
գաւ բաց 'ի վաճառացն քղքին, և շրջակայ վիճակի
նր, և այլ բղմ վաճառք արտաքին արուեց Է այս
քղք անցանեկն . ոն վաճառք որք 'ի գաղղիոյ գնան
'ի գերմանիա, և յիդալիա, և 'ի գերմանիոյ 'ի գաղ-
ղիա : Յնջագոյն ունէր շուրջ զիւրե 6 արուճարձանս .
յորոց չորքն 'ի 1534 'ի հիմանց քանդեցան . և եր-
կուքն, ք' ՍԲ գերմանիոս, և Փալէ միացուցան Է քա-
ղսքին . որով և ևս Էարձակեցաւ քղքն : Բնակիչք
նր իբր 27 հալր, որք ունին զաղանդն կալվինի, և
որ ոք կամի գրիլ քղքացի, սարս է նմ լինիլ կալ-
վինական . դուանին անդ և լուտերականք, այլ և
ուղղափառք, բայց սակաւ : Բաց 'ի մայր եկեղեցւոյն
սքին պետրոսի՝ որ յնջագոյն էր եմլսանիստ, ունի
այլ ևս 5 ժղվդայտին եկեղեցիս, որք առհասարակ
են 'ի ձեռս կալվինականաց : 'ի 1707 թոյլ տուաւ
լուտերականաց կառարել զպաշտամունս իւրեանց
յառանձին տան . և ապա 'ի 1762 ընկալան հրաման
շինել հրապարակական ազօթատեղի . զի մինչև ցայն
ժամ բաց 'ի կալվինականաց, ոչինչ կրան կարող էր
ունել անգ հրապարակական եկեղեցի, կմ ազօթա-
տեղի : Իսկ ուղղափառքն կառարեն զձեթային պաշ-
տամունս 'ի մատուռն կմ յեկեղեցին գեապանին
գաղղիացւոց :

Ունի բղմ հոյակապ շինուածս հասարակաց և մառ-
նաւորաց . յորս գլխաւորքն են ապարանք կմ խոր-
հրգարուն քղքին, որ է 'ի բարձրագոյն տեղւոջ քա-
ղսքին . սչ այնչափ ինչ հեռի 'ի մայր եկեղեցւոյն, հա-
մակ վիմոտալ . ուր գոյ սրահ մի, որոյ յատակն է
'ի մանր և յողորկ գայլախաղ քարանց, Է որ մարթ
է շքիլ երիւարաւ և կառօք : Երևելի է և զինա-
բանն, և դպրոցն մեծ . յորում 12 ուսուցիչք են .
անգ է և գրատուն հմրկաց մեծ և գեղեցիկ : Յայն
դպրոց զառաջինն ուսուցին կալվին, և բիսեան թէո-
դոսիոս, որք թիւրք . յորոց մարթ է իմաստասիրել
և զուսումն, զոր աւանդեցին նք անդ . որ ոչ այլ
ինչ էր, և թէ սչ մուրուի . յորում մինչև ցայսօր վա-
րակել կայ քղքս այս :

'ի ակըռօն՝ յորում ոտանոթ ելանէ 'ի ԼՃԷՆ, է շին
մեծ

ունձ մեծ . յորում պաշին նաւք շինեչք 'ի պաշտպա
նութի , և 'ի դքսանս քղքին : Եւ արտաքոյ գրանց
քղքին՝ են բնի մուկք վայելակերտք սակս գրտա
նաց , և բազմապատիկ պարտեղք , և ծառատունկ ք
զուճարձալիք : Մեծաւոյ ծաղկեչ են 'ի նմ արունեստք ,
և մենգ արունեսան սնունաւոր ժամացուցի . յորում
անունանի է քղքս այս ոչ միայն 'ի բովանդակ եւրո
պիա , այլ նաև յայլ կողմանս Տի :

Այս քղք էր ինքնիշխան , և ազատ հնրկուր ռամկա
պետական . որոյ գերագոյն արունին էր յՃհանուր
ժողովն հասօրէն քղքացեաց [Թ օրինաց դումարեչ .
որ սովորաբար յամին երկիրս և Եթ գումարէր յընտ
րել զդիտաւոր պաշտօնատարս հասարակութե . իսկ
այլ իրողութի նր՝ և մասնաւոր կառավարութի էին
'ի ձեռս երկոյ ժողովոց . յորոյ մին կոչի ժողով 25
արանց . երկրն՝ ժողով 60 արանց . իսկ երգն՝ ժողով
250 արանց : Ժողովն քսանեհնգից՝ պարունակիւր
'ի ժողովն վաթսնից . և սա 'ի ժողովն երկերիւր
յիսնից . իսկ այս՝ յՃհանուր ժողովն քղքացեաց :
Եւ յամ ժողովս յայստիկ նախագահ բազմէին չորք
գլխաւոր պաշտօնատարք , որք կոչէին Տնտեսք . որք
և էին գլուխ հնրկուրն , զորս ընարէր յՃհանուր
ժողովն : Կնիք այսր քղքի և հնրկուրն է վահան բա
ժանեալ յերկուս . յորում յաջմէ կողմանէ է սեաւ
արծուի թափ 'ի գլուխ 'ի վր սակեգոյն են թակայի .
իսկ 'ի ձախմէ բանալի 'ի վր կարմիր են թակայի : Այլ
այժմ ինքնակամ անձնատուր լեալ քաղղիացւոց .
հնգձ շրջակայ վիճակաւ իւրով էանց Է գերագոյն
արունք գաղղիացւոց :

Այս քաղղք 'ի նախնումն էր աւորագացւոց . և 'ի
սկիզբն Ե գարունս արեւցին նմ բուրգոնդիացիք . և
'ի նցէ էանց Է արունք գաղղիացւոց . իսկ 'ի Թ գա
րուն էր մասն թարուն ստորին բուրգոնդիոյ , և Է
այն ժամանակս կոմսք Քինէվաոյի քաղղութի գտեչ ,
արարին՝ իշխանութի իւրեանց ժառանգութի անցանեչ
որդւոց յորդիս . ուստի և լինիլ ինքնիշխան և ան
կախ : Ապա 'ի տիրեչ ք կոռագոսի կայսեր թարուն
բուրգոնդիոյ , կարևոր դատեցաւ բանի Է իւրև
հնազանդեցուցանել զգերողոս կոմսն Քինէվաոյի :
Այս հկնկուիք կոմսից պատճառս ետուն կայսե
րաց , զմեծ մասն իշխանութի իւրեանց որ 'ի վր ձի
նէվաոյի , յունձն ագնել եպոց նր . առեալ նախ 'ի
նցէ երգումն հաւատարմութի : Եւ յայսմանէ անչ
հատ թմն հկնկուիք ծագեցին 'ի մեչ եպոց Քինէվաոյի
և

և կոմսից նր . որք Թէպէտ ոչ ևս կարացին տիրել
 քաղաքին , սակայն զչըջակայ վիճակ նր չէ իշխանութի
 իւրեանց գրաւեցին :

Այս զինի պէտպէս անցից , յորս և սաւոյացիք տի-
 րեցին շըջակայ նրուի նր , և լը իրաց ինչ նաև բուն
 ճինեվա քղքին , բայց գերագոյն տրուէ նր միշտ
 եկաց մնաց 'ի ձեռս ենց . զի կայսերք ձեռնառու էին
 նց , զորս և բազմապատիկ ազատութի ձոխացուցին .

'ի 1478 . քղքն' և շըջակայ վիճակ նր' արարին զաշ-
 խագրուի չ պէճնայի և չ Քրիստոսիկայ : Այս 'ի
 1533 յըռնել համօրէն քղքացուց զազմագն կալվինի ,
 ետնսն յեռ նգովայ զնոսս , գործեաց զայս վրիպակ ,
 զի խոյս ետ անտի յաննրսի քղքն սաւոյացուց . որով
 քղքն իրրև Թէ իրաւամբ ել արտաքս յիշխանութի
 նր . և ստացաւ զբազմաժամանակեայ ցանկացել ա-
 զատուէ իւր : Եւ յայնժամ Քրիստոսիկ քղքն հրա-
 ժարեցաւ 'ի դաշնակցութի նորա . իսկ չ հակառակն
 պէճնա նորոգեաց , և մշտնջեհապէս հարտատեաց
 գառաջին դաշն չ նմա . յոր 'ի 1584 յուեւլաւ և ցու-
 աիկս : Ահա վնկ և ճինեվա քղքն անուանի ըն-
 կերակից չհանուր դաշնակցութի զվիցցերաց : 'ի 1602
 զօրք սաւոյայ յարձակեցան 'ի վր քղքն . և մինչ
 մերձ էին աւնուլ զնա , վանեցան 'ի ճինեվաուցուց .
 չարաչար հարուճածս ընկալել , Եւ 'ի յիշատակ այսր
 յաղթուէ , ամի ամի սոն կատարեն յեկեղեցիս իւր-
 եանց :

